

1606-37
ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ

ՆՈՐԱԿՈՉՅԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1929

ՅԵՐԵՎԱՆ

ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ


== Ծ Ր Ա Գ Ի Ր ==

ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ

ՆՈՐԱԿՈՉՅԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

10213

9762
H



1929

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

ՀԱՅՊՈԼԻԴԱՖԻ 1 ՏՊԱՐԱՆ

Գրառեպդիվար 2152 բ. Պատվեր 3428
Տիրում 500.

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 15

Քաղ. Մոսկվա, 26 մարտի, 1929 թ.

Ընդամեն հայտարարվում է յերկու ձեռնարկ.

1. Ծրագրի պլան և յերկրային զորամասերի նորակոչիկների հավաքների քաղաքապետներին ծրագիր:
2. Քաղաքապետներին ծրագրերի բացատրագիր:
3. Հանրապետության Քաղվարչության 1928 թ. մարտի 23-ի № 21 հրամանը վերացվում է:

ԲԳԿԲ Քաղվարչության պետի տեղակալ՝ ԲՈՒԼԻՆ

Ազիտպրոպագանդի պետի ժամ.

պաշտոնակատար՝ ՌԱԴԻՈՆՈՎ

«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Ե»
 ԽՍՀՄ Քաղ. Վարչության
 պետի տեղակալ ԲՈՒԼԻՆ
 24-ին մարտի, 1929 թ.

Պ Լ Ա Ն

ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՆՈՐԱԿՈՑՅԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎԵԼԻՔ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

Ծրագրային զրույցներ	27
Ընթացիկ և տեղական հարցերի վերաբերյալ	6
Կրկնողական	3

Ընդամենը 36 զրույց 72 ժամ.

ԲԱԺԻՆ I

1. Ինչու յե պետք Կարմիր բանակը 1 զրույց 2 ժամ
2. Ինչպես և կառուցված Կարմիր բանակը 1 զրույց 2 ժամ
3. Առանց դիսցիպլինայի չկա բանակ 1 զրույց 2 ժամ
4. Հրամատար—քաղաշխատող և կարմիր բանակային
1 զրույց 2 ժամ
5. Համկկ(բ) բջիջը և ՀամԼԿՅԵՄ խմբակը
1 զրույց 2 ժամ
6. Կարմիր բանակը և կապիտալիստական բանակները
1 զրույց 2 ժամ

ԲԱԺԻՆ II

7. Ինչո՞ւ համար և ինչպես են գրավել իշ—
խանությունը բանվորներն ու գյուղացիները 1 զրույց 2 ժամ
8. Բանվոր դասակարգի և գյուղացիության
դաշինքը խորհրդային իշխանության և սոց.
չինարարության հիմքն և 1 զրույց 2 ժամ
9. Պրոլետարիատի դիկտատուրան 1 զրույց 2 ժամ
10. Խ. Ս. Հ. Մ. 1 զրույց 2 ժամ
11. Հ. Խ. Ս. Հ. 1 զրույց 2 ժամ
12. Ինդուստրացումը ԽՍՀՄ տնտեսական քա—
ղաքականության հիմքն և 1 զրույց 2 ժամ
13. Գյուղատնտեսության սոցիալիստական վե—
րակերտման ուղիները 1 զրույց 2 ժամ

14. Կոլլեկտիվ տնտեսությունների մասին . 1 զրույց 2 ժամ
15. Բերքատվության բարձրացման մասին 1 զրույց 2 ժամ
16. Գյուղմիրասհարկի մասին. (տես «Վոյեննի Վեստնիկ» № 8 ազգային հանրապետության գյուղմիրասհարկի կանոնադրությունը և տեղական ֆինոբգանների մատերիալները 1 զրույց 2 ժամ
- 17-18. Ինչպես և խորհրդային իշխանությունը վերաբերվում չքավորին, միջ. և կուլակին 1 զրույց 2 ժամ
19. Համկի(բ) սոցիալիզմի կառուցման կազմակերպիչն և ԽՍՀՄ-ում 1 զրույց 2 ժամ
20. Խորհրդային և կապիտալիստական հասարակակարգեր 1 զրույց 2 ժամ
21. Լեհաստան
22. Ռումինիա 1 զրույց 2 ժամ
23. Մերձբալթյան պետություններ . . 1 զրույց 2 ժամ
24. Մեր բարեկամները թշնամիների բանակում 1 զրույց 2 ժամ
25. Համաշխարհային հեղափոխական շարժումը և Կոմինտերնը 1 զրույց 2 ժամ
26. Նոր պատերազմների վտանգը և յերկրի պաշտպանության համար պատրաստությունը 1 զրույց 2 ժամ
27. Ինչումն և մեր ուժը 1 զրույց 2 ժամ
28. Միջնավաքային աշխատանք 1 զրույց 2 ժամ
- 16-րդ կուսկոնֆերանսի վորոշումների մշակումը:
ԽՍՀՄ խորհուրդների V-րդ համագումարի վորոշումների մշակումը, մշակումները կտրվեն իր ժամանակին «Վոյեննի Վեստնիկ»-ում: (Ընթացիկ և տեղական հարցերի ժամերի հաշվին):
- Կուսակցության և խորհրդային ապարատի դոման հարցի մշակում:

ԽՍՀՄ ագիտպրոպագանդի պետի ժամ. պաշտ. ՌԱԴԻՈՆՈՎ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Քաղաքական պարագայի բարդությունը, վերի պայմաններում պետք է անցնեն ընթացիկ տարվա հավաքները, պահանջում է հատուկ ուշադրություն նվիրել քաղաքական պարագամունքներն անցկացնելուն:

Հսկայական բովանդակությունը, կոնկրետությունը, կապը տեղական մատերիալի հետ, կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականության բացատրության ժամանակ վերոշակի դասակարգային գիծ անցկացնելը—քաղաքապմունքների դրման պորժում հիմնական խնդիրն է:

2: Հավաքների ծրագրի ավելի բարդ հարցերը յերկրորդ և մասամբ յերրորդ բաժինների թեմաներն են: Այդ հարցերի լրջությունը պահանջում է ամբողջ քաղապարատից և զորամասի կուսկազմակերպությունից մաքսիմալ ուշադրություն դարձնել նրանց անցնելու վրա: Ուժակավարներին խոչորազույն ոգնություն պիտի ցույց տալ այդ բոլոր հարցերի պատրաստության և պարզարանության դործում:

Զորամասերի քաղորդանքների և քաղապարատների հատուկ խնդիրն է հանդիսանում՝ խմբակավարներին և քաղղեկներին անհրաժեշտ մատերիալի հայթայթումը: Դիվիզիայի և գնդերի ամբողջ ղեկավար քաղկազմը պետք է որեցոր հաճախ քաղաքական պարագամունքներին, անձամբ տանի առանձին զբույցներ ավելի բարդ թեմաներից: Ճամբարային պայմանները թույլ են տալիս ինստրուկտաժ անցկացնել Քաղբաժնի ուժերով գնդի մասնատարով: Ժամանակակից քաղաքական պայմանների բարդությունը և ծրագրի թեմաների բարդությունը պահանջում են հատուկ ուշադրություն դարձնել խմբակավարների վերակային ընտրության հարցերի վրա: Հարկավոր է վճռականորեն վերջ տալ միջին պետկազմին կրտսեր հրամատարներով փոխարինելու փորձերին. կրտսեր հրամատարներին կարելի չէ աշխատանքի մեջ քաշել միայն այն դեպքում, յերբ զորամասերում բացակայում է միջին հրամկազմի բավակա նաչափ կադրը և այն ել աշխատանքի մեջ պիտի քաշել կուսակ-

ցության ավելի պատրաստված անդամներին և թեկնածուներին : Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել քաղաքապետներին ակտիվացման վրա, այդ պարագային անհրաժեշտ է կապանչիկների և ֆորմալիզմի վճռապես հաղթահարելու վրա : Քաղաքապետները և կուսկազմակերպությունները պետք է ուշադրություն դարձնեն կարմիր բանակայինների բատրակ-չքաղաքական մասի կողմից գերազանց յուրացման վրա :

3. Այն դորամատերում, վորտեղ բանվորական կազմը գերակշռեց և, անհրաժեշտ է բերքատվության բարձրացման, կուլտուրականությունների և գյուղատնտեսական մասին գրույցների փոխարեն անցնել հետևյալ գրույցները :

ա) Ինչ վորտեղ արհմիությունների VIII համագումարը : (Տես «Վոյեն - Վեստ» № 4) :

բ) Արտագրության ռացիոնալիզացիան ԽՍՀՄ-ում : (Տես ԽՍՀՄ Քաղվարչության բյուլլետեն № 22—28 թ.) :

գ) Աշխատանքային գիտելիքների մասին (տես «Վոյեն - Վեստ» № 12) :

Այնտեղ, վորտեղ բանվորական մասը փոքրամասնություն է կազմում, անհրաժեշտ է այդ հարցերը մշակել խմբակային կարգով արտադրողական ժամերին :

4. Այն դորամատերում, վորտեղ բառակային կազմը մեծ է, անհրաժեշտ է նրանց հետ խմբակային կարգով մշակել Համկի(բ) կի-ի վորոշումները գյուղատնտեսական բանվորների շրջանում տարվող աշխատանքի մասին : (Տես «Պրավդա» 23 մարտի—1929 թ.) :

5. Առանձնակի ուշադրություն պիտի նվիրել այն հարցերին, վորոնք կապված են 16-րդ կուսկոնֆերանսի և ԽՍՀՄ խորհուրդների V համագումարի վորոշումների հետ : Այս հարցերի վերաբերյալ կտրվեն լրացուցիչ ցուցումներ :

6. Պարագմունքներն անցկացնելիս անհրաժեշտ է ազդեցությունը «Վոյեննի Վեստնիկ»-ի ծրագրի թեմաների վերաբերյալ մշակումները, վորոնք տրվել են 1928—1929 թ. ձմրան շրջանում :

ԽՍՀՄ Քաղվարչության ագիտպրոպագանդ

ժամ. պետ՝ ՌԱԴԻՈՆՈՎ

Ավ. հրահանգիչ՝ ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎ

ԲԱԺԻՆ I

Զրույց 1-ին.—*Ինչու յե պետք Կարմիր բանակը*. տես «Քաղ-պարապմունքների յերկամյա ծրագիր» եջ 29-32) :

Զրույց 2-րդ.—*Ինչպիսին պետք է լինի բանվորա-գյուղացիական կարմիր բանակայինը* (նույն տեղում եջ 36-39) :

Զրույց 3-րդ.—*Առանց գիտցիպլինայի չկա բանակ* (նույն տեղում եջ 39-42) :

Զրույց 4-րդ.—*Հրամատար-ֆաղաշխատող և կարմիր բանակային* (նույն տեղում, եջ 42-46) :

Զրույց 5-րդ.—*Համ. Կ. Կ. (Բ) բջիջը և ՀամԼԿՅԵՄ խմբակը* (ոգտագործել յերկամյա ծրագրի 6-րդ գրույցը—մինչև 2-րդ կետը ներառյալ—եջ 49, այնուհետև ամցնել 7-րդ գրույցի 4-րդ կետը, ապա միայն 6-րդ գրույցի 3-րդ կետը, եջ 49-50) :

Զրույց 6-րդ.—*Կարմիր բանակը և կապիտալիստական բանակ-ները* (նույն տեղում եջ 61-65) :

ԲԱԺԻՆ II

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԽՍՀՄ-Ի ՊԱՇՏՊԱՆՆ Ե

Զրույց 7-րդ.—*Ինչու համար և ինչպես են գրավել իշխանութ-յունը բանվորներն ու գյուղացիները*, (նույն տեղում, եջ 66-71) :

Զրույց 8-րդ.—*Բանվոր դասակարգի և գյուղացիութ-յան դաշին-քը խորհրդային իշխանութ-յան և սոցիալիստա-կան շինարարութ-յան հիմքն է* (նույն տեղում, եջ 72-78) :

Զրույց 9-րդ.—*Պրոլետարիատի գիտատուրան* (նույն տեղում, եջ 79-85) :

Զրույց 10-րդ.—*ԽՍՀՄ* (նույն տեղում, եջ 88-93) :

Զրույց 11-րդ.—*ՀԱԽՀ* (նույն տեղում, եջ 318-322) :

ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻՅԱՆ ԽՍՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Ե

ԶՐՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Պարզարանել կարմիր բանակայիններին, վոր սոցիալիզմի հաջող կառուցումն ապահովող միակ ուղին հանդիսանում է մեր յերկրի ինդուստրացման ուղին. վոր ԽՍՀՄ միջազգային դրության լարվածությունն ու գյուղատնտեսության սոցիալիստական վերակերտման ու կապիտալիզմը վերջնականապես արմատախիլ անելու անհրաժեշտությունը պահանջում են ինդուստրացման առավելագույն արագ թափ՝ կապված տնտեսական շինարարության պլաններին լարվածության հետ. վոր մեր յերկրում ինդուստրացման իրագործումը պահանջում է վճռական դիմադրություն այն բոլոր փորձերի դեմ, վոր ձգտում են հրել կուսակցությունն ու բանվոր դասակարգը դեպի ինդուստրացման թափի դանդաղեցման ճանապարհը, կամ դեպի տրոցկիստական գերինդուստրացման ճանապարհը:

ԶՐՈՒՅՑԻ ՊԼԱՆԸ

1. Սոցիալիստական շինարարության դժվարությունը ԽՍՀՄ մեջ:
2. Ինդուստրացումը, վորպես սոցիալիստական շինարարության գլխավոր գիծ:
3. Յերկրի ինդուստրացման թափն ու մեր դժվարությունները:
4. Պայքար սոցիալիստական շինարարության գլխավոր գծից կատարած զանազան թեքումների դեմ:

1. Խորհրդային ԽՂտնության Հիմնական խնդիրը Հանդիսա-
նում և սոցիալիզմի կառուցումը: Նա այդ խնդիրը ստիպված և ի-
րագործել մեր յերկրի ազգարային բնույթի պայմաններում՝ ցըր-
ված ու բաժան-բաժան դյուղացիական տնտեսությամբ. անբալա-
րար և զարգացել արդյունարերությունը, մանավանդ նրա ծանր
ճյուղերն ու մեքենայագործությունը, տեխնիկայես Հետամնաց
և թե՛ դյուղատնտեսությունը և թե՛ արդյունարերությունը, կուլ-
տուրայես Հետամնաց են բանվորագյուղացիական մաստաները, և
դիմադրություն են ցույց տալիս կապիտալիստական տարրերը մեր
սոցիալիստական շինարարությանը:

Այս բոլոր անրարենպաստ պայմանները կրկնապատկվում են
ԽՍՀՄ կապիտալիստական շրջափակումով:

Այս պայմանները, վորոնց մեջ Հարկ և լինում իրագործել սո-
ցիալիստական շինարարությունն, տաջացնում են զգալի դժվա-
րություններ:

Գյուղացիական տնտեսությունների ցրվածությունն ու փո-
շիացումը ժողովրդական տնտեսության մեջ ստեղծում են բազա
պարենալորման ու հումույթային դժվարությունների Համար:
Գյուղատնտեսության և մանավանդ նրա Հացահատիկային մասի
զարգացման թափի Հափից դուրս Հետամնացությունն ավելացրեց
մեր դժվարությունները Հացամթերման և արդյունարերությունը
դյուղատնտեսական հումույթով ապահովելու դժոյ և առաջա-
ցրեց նույնպես Հացն արտասահման արտահանելու լրիվ դադարե-
ցում:

Գյուղատնտեսության ցրվածությունն ու փոշիացումը անում
ե և կապիտալիստական տարրերին, վորոնց աճումը ստեղծում և
յերկրում կապիտալիզմի վերածնման (ոեստալրացիայի) սպառ-
նալիք և դժվարացնում և սոցիալիստական շինարարության ա-
ճումը:

Յերկրի արդյունարերության և մանավանդ ծանր ինդուս-
տրիայի ու մեքենայագործության Հետամնացությունն աղբյուր և
Հանդիսանում յերկրում ապրանքային սոյի, դժվարացնելով
ժողովրդական տնտեսության տեխնիկական Հիմնական վերակա-
ռուցումը և դյուղատնտեսությունը նոր կոլլեկտիվ Հիմքերի վրա
փոխադրումը: Նույն այդ պայմանները մեղ ստիպում են կախում
ունենալ կապիտալիստական յերկրներից, դժվարացնելով ԽՍՀՄ
պաշտպանության խնդիրը:

Մեր ժողովրդական տնտեսութեան տեխնիկական հետամնացութիւնը պայմանաւորում է դյուղատնտեսութեան և արդյունաբերութեան ցածր արտադրողականութիւնը, ծանրացնում է բանվորի և դյուղացու աշխատանքը, անդրադառնում է բանվորի աշխատավարձի մակարդակի վրա, պատճառ և լինում դյուղացիութեան յեկամուտների ցածր մակարդակի, թանդացնում է արդյունաբերական մթերքների դները, ցածրացնում է այդ մթերքների վորակը և սլատճառ և դառնում դյուղատնտեսութեան և արդյունաբերութեան մթերքների դների տարբերութեան մեծացման (մէլրատի) :

Կուլտուրական հետամնացութիւնը դժվարացնում է ժողովրդական տնտեսութեան տեխնիկական վերակառուցումը, աղբյուր է ծառայում աշխատանքի հին մեթոդների, աշխատանքի ցածր արտադրողականութեան և այլն թե՛ դյուղատնտեսութեան և թե՛ արդյունաբերութեան մեջ, դժվարացնում է ռացիոնալացման մեր աշխատանքը և բարդացնում է հի.Պնական շինարարութիւնը :

Աշխատավորական լայն մասսաների կուլտուրական հետամնացութիւնը, վորակյալ աշխատողների, բանվորների ու դյուղացիների բովականաչափ կազրի բացակայութիւնը ստիպում է մեղողատադրծել հաճախ դասակարգայնորեն մեղ խորթ մասնադետներին, վորոնց աւանձին ներկայացուցիչները դբաղվում են ուղղակի վնասարարութեամբ մեր ժողովրդական տնտեսութեան մեջ, հանդիսանալով համաշխարհային բուրժուազիայի դործակաշները : Կուլտուրական հետամնացութիւնը սնում է նաև խորհրդային աւարատում բյուրոկրատիզմը, վորը հանդիսանում է սոցիալիստական շինարարութեան մեծագույն արգելակը :

Դասակարգայնորեն թշնամի կապիտալիստական տարրերի դոյութիւնը յերկրում առաջացնում է նրանց ախտիվ պայքարն ընդդէմ սոցիալիստական շինարարութեան և հակադդեցութիւն խորհրդային Իշխանութեան միջոցառումների դեմ : Տվյալ շրջանում մենք ունենք դասակարգային պայքարի սրումը յերկրում, վորպէս բանվոր դասակարգի հաջող հարձակման հետևանք սոցիալիստական շինարարութեան բոլոր տեղամասերում :

Ներքին բնույթի այս բոլոր դժվարութիւնները հատուկ սուր ձև են ստանում ՈՍՀ Միութեան կապիտալիստական շրջափակման հետևանքով :

Ոտարերկրյա կապիտալիստներն ու կալիաժատերերը ձգտում են ոգտադրծել մեր տնտեսական դժվարութիւնները սոցիալիս-

տական շինարարութիւնը քանդելու նպատակով, ուստի և վորեն տնտեսական ոլնութիւն չենք կարող սպասել կապիտալիստական Յեկթրոպայից և Ամերիկայից. ընդհակառակը, կապիտալիստական չրջափակումը ստեղծում և խՍՀՄ պաղմական ինտելիկեցիայի մշտական վտանգը, վորն աճում և տարեց-տարի :

Այդ բոլոր դժվարութիւնները նախ՝ հանդիսանում են պատմական տնտեսական գիտարարքիաների արդշունք, վորոնք կարմվել են ցարական կառավարութիւն քաղաքականութիւն հետեանքով, և յերկրորդ՝ նրանք բղխում են այն փաստից, վոր մենք ստիպված ենք առայժմ սոցիալիզմ կառուցել միայն մի յերկրում :

2. Հաղթահարել ներքին կարգի դժվարութիւնները մենք կարող ենք միայն այն պայմանով, յեթե լիովին սոցիալիստական վերակերաման յենթարկենք մեր ժողովրդական տնտեսութիւնը : Այդ խնդրի իրագործումը հնարավոր և միայն, անշեղ կիրառելով մեր յերկրի ինդուստրացումը, վորպեսզի բոտ հնարավորին կարճ ժամանակամիջոցում տնտեսական տեսակետից հասնենք և անցնենք կապիտալիստական առաջավոր յերկրներին : Յերկրի ինդուստրացումը մեր տնտեսական շինարարութեան գլխավոր գիծն և սոցիալիզմի նախապարհին : Այդ դիծը նշել եր պես ընդ. Լենինը և առանձնապես սուր կերպով առաջ եր քաշված, վորպես հերթական տնտեսական քաղաքականութիւն մեր կուսակցութիւն 14-րդ և 15-րդ համագումարների կողմից : Միայն այդ ճանապարհը կարող և ապահովել մեր տնտեսական անկախութիւնը կապիտալիստական յերկրներից և աջակցել խՍՀՄ պաշտպանութիւն ամրացմանը : Զարգացման մի այլ ճանապարհ անխուսափելիորեն մեզ կհասցնէր ստրկացման, մեր յերկրը կզարձներ խոշոր կապիտալիստական պետութիւնների դաղութը և կվերացնէր խորհրդային իշխանութիւնը : Այդ պատճառով բանւոր դասակարգը տալիս և ինդուստրացման գործին իր բոլոր ուժերն ու յեռանդը, իսկ մեզ թշնամի բոլոր ուժերը ձգտում են ձախողել սոցիալիզմի զարգացող շինարարութիւնը :

Մեր յերկրի ինդուստրացումը կենսագործելու համար անհրաժեշտ և առաջին հերթին ուժեղացնել սոցիալիստական ծանր ինդուստրիայի զարգացումը, ապահովել նրա ղեկավարող դերը ժողովրդական տնտեսութեան մեջ :

Նման միջոցառումը պահանջում և առավելագույն չափով ընդարձակել մետաղաձուլութիւնը, վորը հանդիսանում և խոշոր

արդյունարերության բաղան, զարգացնել առաջին հերթին արդյունարերության այն ճյուղերը, վորոնք արտադրության միջոցներ ու գործիքներ են արտադրում: Յերկրի ինդուստրացումը յենթադրում է լրիվ տեխնիկական վերակերտման յենթարկել գյուղատնտեսությունը և փոխադրել այն կոլլեկտիվ հիմունքների վրա: Յերկրի ինդուստրացումը յենթադրում է լիովին ելքտրիֆիկացիայի ու քիմիացման յենթարկել ժողովրդական տնտեսությունը: Յերկրի ինդուստրացումն առաջ է քաշում ամբողջ ժողովրդական տնտեսության, և առաջին հերթին, արդյունարերության ռացիոնալացման, աշխատանքի արտադրողականության հսկայական վերելքի, արտադրանքի աժանացման, նրա վորակի բարելավման անհրաժեշտությունը, վորը տալիս է աշխատավոր լայն խավերի նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացում: Յերկրի ինդուստրացումն ապահովում է աստիճանաբար կապիտալիստական տարրերին վանելու հնարավորությունը: ԽՍՀՄ պաշտպանունակությունը հզոր բաղա յի ստանում ինդուստրացման իրագործումով:

Մեր ամբողջ տնտեսական գործունեությունը վերջին տարիներս ուղղված էր դեպի ինդուստրացման խնդիրների գործնական լուծումը: Այդ բնագավառում մենք զգալի հաջողությունների հասանք: 16-րդ կուսկոնֆերանսն ու ԽՍՀՄ Խորհուրդների V համագումարը հաստատեցին մեր տնտեսական շինարարության 5-ամյա պլանը, վորի իրագործումը խիստ մեծ չափով առաջ կտանի ԽՍՀՄ ինդուստրացման գործը:

Հարկ է մեզ լուծել «տեխնիկական-տնտեսական տեսակետից հասնել և անցնել կապիտալիստական յերկրներին» խնդրին այնպիսի պայմաններում, յերբ Յեվրոպայում և մանավանդ Ամերիկայում տեխնիկան և արտադրության ռացիոնալացումը համեմատած նախապատերազմյան չրջանի հետ հսկայական հաջողություններ են գործել, և յերբ կապիտալիստական տնտեսությունն իր զարգացման մեջ անցել է նախապատերազմյան մակարդակը: Միանգամայն ակնհայտ է, վոր նման պայմաններում կարելի յե հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներին միայն տնտեսական զարգացման անհամեմատ ավելի արագ թափի պայմանով, քան այդ տեղի յե ունեցել մինչև իսկ ամենաառաջավոր բուրժուական պետություններում:

Ինդուստրացման արագ թափի անհրաժեշտությունը թելադրում են մեզ նաև միջազգային պարագան ու գյուղատնտեսու-

Թյան սոցիալիստական վերակերտման խնդիրները : Բանք նրան հունձնե և վոր մեր դարգացման խաղաղ շրջանի վրա մենք կարող ենք նախել միայն , ինչպէս ժամանակավոր դադարի : Ռազմական վտանգի աճումը ցույց և ապիտ , վոր հուշս գնել շատ յերկարատե տասնյակ տարիներ տեղդ դադարի վրա մենք չենք կարող : Ուստի մեր յերկրի ինդուստրացման Թափը պետք և առաջիկա դոյն արագ լինի , վորպէսպի խաղաղ դադարի տարիներում մեր տնտեսական շինարարության մեջ հասնենք այնպիսի հաջողությունների , վորսնցով պատերազմի ժամանակ մենք կարողանանք ինքնեքս լիովին ապահովել ԽՍՀՄ պաշտպանությունը : Չնայած Խորհրդային Իշխանության համարյա տասներկուամյա դոյնության , մենք միայն նոր ենք անցել մեր դյուղատնտեսությունից կապիտալիզմի արժատախիլ անելուն : Յիշած ու ժողիացած դյուղացիական տնտեսությունն արգելակ և դատնում ամբողջ սոցիալիստական շինարարության համար , նա հանդիսանում և գլխավոր հիմքը հացահատիկային տնտեսության ճշմարտմային յերեւելութիւնների համար , նա հանդիսանում և բազա կապիտալիստական տարրերի աճման ու դարգացման համար : Վերջնականապէս արժատախիլ անել կապիտալիզմը կարելի յե միայն դյուղատնտեսության հիմնական վերակառուցման գետքում , կոլլեկտիվացման միջոցով և հզոր տեխնիկական հիմք գնելով դյուղատնտեսության դարգացման տակ :

Այդ վերջին խնդիրը կարելի յե նույնպէս վճռել միայն ինդուստրացման արագ Թափի պայմաններում :

Այդպիսով բոլոր այն պայմանների հանրագումարը , վորոնց մեջ հարկ ե կառուցել ԽՍՀՄ սոցիալիստական շինարարությունը , բելադրում եմ ինդուստրացման առավելագույն հնարավոր արագ քափի անհրաժեշտությունը :

4. Ինդուստրացման արագ Թափի իրագործումը կապված և մեր տնտեսական շինարարության լարվածության ու մի շարք ժամանակավոր կարգի դժվարությունների հետ : Այդ դժվարություններն առաջացնում են տատանումներ բանվոր դասակարգի առանձին հետամնաց խավերի մեջ և ողտագործվում են մեր դասակարգային Թշնամիների կողմից պայքարելու համար ինդուստրացման նշված Թափի դեմ : Տատանումները բանվոր դասակարգում և Թշնամական հարձակում սոցիալիստական շինարարության գլխավոր դժի դեմ իր արտահայտությունն և գտնում նաեւ մեր կուսակցության առանձին խավերի մեջ : Ներկայումս մենք դործ

ունենք մի կողմից՝ «գերինդուստրացման» (տրոցկիստների) քաղաքականության պահանջի հետ, վրը կարող ե բանվոր դասակարգի և գյուղացիության հիմնական մասսայի դաշինքի խղում ստաջանել, և մյուս կողմից՝ կուսակցության առանձին անդամներ առաջ են քաշում ինդուստրացման թափի դանդաղեցման, կուլակի դեմ վճռական հարձակումից հրաժարվելու և կապիտալիստական տարրերին դիմադրող անկու քաղաքականությունը: Այդ դերձին քաղաքականությունն ըստ ելուստյան կուսակցության գլխավոր դժից հրաժարվելու քաղաքականությունն ե: Կուսակցությունը, բանվոր դասակարգն ու գյուղացիության աշխատավոր մասսաները պետք և վճռական դիմադրություն ցույց տան կուսակցության գլխավոր դժից գործած յերկու թեքումներին ել և դեպի նրանց ցույց տված հաշտվողականությունը:

«Գերինդուստրացման» առաջին թեքման կուսակցությունը տվել և արդեն վճռական դիմադրություն՝ հեռացնելով այդ թեքումը կրողներին (տրոցկիստներին) իր շարքերից, վրոնք անցել եյին ակտիվ պայքարի վրչ միայն կուսակցության ներսում, այլև խորհրդային իշխանության դեմ:


Այդ պատճառով ընթացիկ շրջանի կարեւորագույն խնդիրն և հանդիսանում վճռական պայքարը յերկրորդ (աջ) թեքման դեմ: Վճռականապես կովելով բոլոր թեքումների դեմ կուսակցությունը պետք և սաշտպանի և հաստատապես կիրառի մեր սոցիալիստական շինարարության գլխավոր գիծը — յերկրի ինդուստրացումը:

ԶՐՈՒՅՑ 13-ԲԴ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԵՐՏՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԶՐՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿ

Պարզարանել կարմիր բանակայիններին, վր հաջող սոցիալիստական շինարարությունն անհնար ե առանց գյուղատնտեսության սոցիալիստական վերակերտման. վր այդ խնդրի հիմնական լուծումը հնարավոր ե միայն չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունների մասսայական կոլլեկտիվացման ու գյուղատնտեսության տեխնիկական մեքակարգեցման պայմաններով. վր



խորհրդային տնտեսութիւններ շինարարութիւնը հանդիսանում է գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման հիմնական լծակը։ Վոր ԽՍՀՄ ինդուստրացումը հանդիսանում է գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումն ապահովող հիմնական պայմանը։

Զրույցի պլանը

1. Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակերտման նշանակութիւնը ԽՍՀ Միութեան մեջ սոցիալիզմի հաջող կառուցման համար։

2. Գյուղատնտեսութեան տեխնիկական հետամնացութիւնն ու փոշխացումը, վորպէս մեծազույն արդէլք նրա վերակերտման համար։

3. Կոլլեկտիվացումն ու տեխնիկական վերակերտումն ապահովում են գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը։

4. Կոտլերացիայի նշանակութիւնը գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման համար։

5. Խորհրդային տնտեսութիւններ ի նշանակութիւնը գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման մեջ։

6. Ինդուստրացումը, վորպէս գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման հիմք։

1. Սոցիալիստական շինարարութիւնը ԽՍՀ Միութեան մեջ անհնար է առանց միաժամանակ գյուղատնտեսութեան արտադրական ուժերի բարձրացման և առանց գյուղատնտեսութեան սոցիալիստական հիմունքներով վերակերտման։ Բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիութեան հիմնական մասսայի հետ բղխում է այդ յերկու դասակարգերի շահերի ընդհանրութիւնից սոցիալիզմի շինարարութեան գործում և նրանից, վոր բանվոր դասակարգի ղեկաւարտութեան ապահովում է գյուղացիական չքավոր ու միջակ տնտեսութիւնների զարգացման սոցիալիստական ուղին։

«Յեթն արդյունաբերութիւնն ինքնին հանդիսանում է գյուղատնտեսութեան հզոր շարժիչը սոցիալիստական ինդուստրացման հիման վրա նրա վերակերտման ճանապարհին, ապա գյուղատնտեսութիւնը ներկայացնում է արդյունաբերութեան զարգացման բազա նաև վորպէս շուկա, վորը կլանում է արդյունաբերութեան

արտադրանքները և վորպես հումուլթի ու պարենի մատակարարող: Դեռ ավելին, գյուղատնտեսական մթերքների և առաջին հերթին, հացամթերային արտահանութեան չափերից են զգալիորեն կախումը արդյունաբերութեան համար արտադրութեան միջոցների ներմուծումը: Գյուղատնտեսութեան մանավանդ հացահատիկային ճյուղի չափազանց ցածր մակարդակն այն ժամանակ, յերբ անխուսափելիորեն արագ թափով զարգանում և սոցիալիստական արդյունաբերութեանը, վորպիսի զարգացումը թելադրում և ներքին և արտաքին պարագայով, իր մեջ թաղցնում և խզման վտանգ սոցիալիստական քաղաքի ու մանր-գյուղացիական գյուղի միջև» (ՀԱՄԿԿ (Բ) Կենտկոմի հուլիսյան պլենումի բանաձևից): Խզման այդ վտանգն իր արտացոլումն և դտնում մեր ժողովրդական տնտեսութեան առանձին ճյուղերի անման թափի մեջ (արդյունաբերութեանը 1927—28 թվին—20%, իսկ գյուղատնտեսութեանը— 4,7 %): Այդ պատճառով ամբողջ սրութեամբ ծառանում և գյուղատնտեսութեան արտադրական ուժերի անման թափի արագացման և գյուղատնտեսութեանն ամենարագ կերպով սոցիալիստական հիմունքներով վերակերտման անհրաժեշտութեանը:

2. Մեր գյուղատնտեսութեանն առանձին գյուղացիական տնտեսութեանների բազմամիլիոն մասսա յե: Հոկտեմբերյան հեղափոխութեանից հետո շնորհիվ նրան, վոր կալվածատիրական ու մասամբ կուլակային հողերն անցան աշխատավոր գյուղացիութեանը, մանր գյուղացիական տնտեսութեանների քանակն ավելացավ: Զի դադարում գյուղացիական ծխերի մանրացումը նաև ներկայումս: 1916 թվի 16 միլիոն ծխի փոխարեն մենք ներկայումս ունենք մոտ 25 միլիոն գյուղացիական ծուխ: Գյուղատնտեսութեան տեխնիկական մակարդակը չափազանց ցածր և: Գյուղացիական տնտեսութեաններում մինչև այժմ ոգտազործվում և մոտ 5 միլիոն արոր: Հանքային պարարտանյութերի ու խոշոր գյուղատնտեսական մեքենաների գործադրութեամբ մենք բռնում ենք վերջին տեղերից մեկն աշխարհի բոլոր յերկրների մեջ:

Գյուղատնտեսութեան տեխնիկական ցածր մակարդակն ու նրա փոշիացումը նրան սակավ յեկամտային են դարձնում: Տարեկանի (ուրժ) մի գեկայատինի բերքը Պսկովի նահանգի մանր տնտեսութեան մեջ (տարեկան 200 ուուրլի ընդհանուր արտադրութեամբ) հավասար և 0,52 տոննի, իսկ բերքն ավելի խոշոր տնտեսութեան մեջ (տարեկան 1400 ոուուրլի և ավելի ընդհանուր արտադրութեամբ) հավասար և 1,29 տոննի:

Մի բանմուրի մի որվա յեկամուտը Վյատկայի նահանգում հա-
վասար և սակավադուր տնտեսության մեջ 31 կոպեկի, իսկ ունեւոր
տնտեսության մեջ՝ 79 կոպեկի :

Մի հոգւո յեկամուտը չքավոր տնտեսության մեջ տարեկան
հավասար և միջին հաշվով 78 ուրբու, իսկ միջակ տնտեսությու-
նում՝ 92 ուրբու :

Մանր գյուղացիական տնտեսությունները վոչ միայն սակավ
յեկամտային են, այլ մինչև իսկ մնասարեր են : Մի տոնն տարե-
կանի ինքնարժեքը Վյատկայի նահանգի չքավոր տնտեսության մեջ
հավասար և 65 ուրբի 47 կոպեկի, իսկ ունեւոր տնտեսության մեջ՝
26 ուրբի 67 կոպեկի : Պսկովի նահանգում մի տոնն կտավատի
ինքնարժեքը չքավոր տնտեսության մեջ հավասար և 721 ուրբ. 62
կոպեկի (շուկայի գինը հավասար և 522 ուրբ. 16 կոպ.) : Նույն
այդ նահանգում մի տոնն կտավատի ինքնարժեքն ունեւոր տնտեսու-
թյան մեջ հավասար և 381 ուրբ. 75 կոպ. : Զքավոր տնտեսու-
թյան մնասարերությունը ծածկվում և ի հաշիվ սննդի, հաղուստի
վատթարացման, կուլտուրակ. պահանջների բավարարումից հրա-
ժարման և ի հաշիվ վոչ հողագործային աշխատանքներից ստա-
ցած վարձի : (Վոչ հողագործային աշխատանքը համարյա հավա-
սար և գյուղացիական բնակչության գյուղատնտեսությունից ստա-
ցած յեկամտին) :

Գյուղատնտեսութեան փոշիացած դրությունն ու ցածր բերքա-
տվությունը նրան սակավ ապրանքային եմ դարձնում, այսինքն՝
նա ընդունակ չի լինում շուկա նետելու ժողովրդական տնտեսու-
թյան համար պահանջվող հացի և այլ մթերքների քանակը :

Այսպես, որինակ՝ նախապատերազմյան ժամանակ մեր գյուղա-
տնտեսությունը շուկա յեր հանում տարեկան 21.411.475 տոնն
հաց, իսկ այժմ միայն 10.317.769 տոնն հաց : Այդ քանակը հնա-
րավորություն չի տալիս ունենալու հացի հարկավոր պաշարները
յերկրի ներսում և թույլ չի տալիս մեծ քանակով հաց արտահանել
արտասահման, վսրն իր հերթին դժվարացնում և հարկավոր քա-
նակով մեքենաների, տրակտորների և հումուլթի ներմուծումը,
վոր անհրաժեշտ են մեր ժողովրդական տնտեսության համար : Ապ-
րանքային հացի սահմանափակ լինելը շուկայում կուլակին թույլ
և տալիս ողտադործելու իր ավելցուկները դժվարություններ ըս-
տեղծելու համար խորհրդային պետությանը :

Դյուղատնտեսութեան փոշիացած դրութիւնը սնում ե նաև կապիտալիստական տարրերի աճումը, ստեղծելով ԽՍՀՄ մեջ կապիտալիզմի վերականգնման սպառնալիք:

Վերացնել դյուղատնտեսութեան տեխնիկական հետամնացութիւնը միամեկնա թգուկային տնտեսութիւնների պայմաններում անհնար ե, վորովհետեւ չքաւորն ու միջակը յերրեք այնքան միջոցներ չեն ունենա, վոր ձեռք բերեն մեքենաներ, ե բացի այդ, մեքենաների գործածութիւնը մանր տեղամասերում ձեռնտու չե: Մանր տնտեսութիւններում հաճախ ձեռնտու չե մինչև իսկ ձիեր պահել: Այսպես, որինակ՝ Հողթողկոմատի հաշիվներով 8 միլիոն դյուղացիական տնտեսութիւններում ձիերը չեն հանում իրենց պահելու ծախքը: Զքաւոր տնտեսութիւններում ձիու բեռնաւորումը չի անցնում 30 տոկոսից: Իսկ վորպեսզի լիովին ոգտագործվեն բարդ մեքենաները, անհրաժեշտ ե պահպանել Հողի մշակման հետեյալ չափերը. — ցանելու մեքենայի համար—57 հեկտար, Հող, խոտհարի համար՝ 103 հեկտար, հնձող մեքենայի համար՝ 49 հեկտար, տրակտորների համար՝ 121 հեկտար. այլ կերպ Հողի մշակումը չափաւանց թանգ ե նստում (կոմունայում մեկ հեկտար Հողի մեքենաներով մշակումը նստում ե 7 ուրբլի 40 կոպեկ, իսկ միանձնյա տնտեսութեան մեջ 16 ուրբլի 60 կոպեկ): Մինչև իսկ պետութեան ոգնութիւնն ամեն անգամ չի ոգտագործվում սակաւագոր տնտեսութեան մեջ, ե այդ ոգնութիւնն ամեն անգամ հրնարաւոր չի լինում գործադրելու արտադրական կարիքների համար: Բոլոր վարկերի մոտ 20 տոկոսը սակաւագոր տնտեսութիւնն ոգտագործում ե սպառողական կարիքների համար ե միայն 4,6 տոկոսն ոգտագործում ե ինվէնտար, դյուղատնտեսական մեքենաներ գնելու համար: Իսկ ունեւոր տնտեսութիւններում բոլոր վարկերի 37,9 տոկոսն ոգտագործվում ե ինվէնտար գնելու համար ե միայն 7,6 տոկոսն ե ծախսվում սպառողական կարիքների համար:

3. Զքաւորական ու միջակ տնտեսութեան հիմնական բարձրացման լավագույն ե ամենաշահաւետ միջոցը հանդիսանում ե կոլեկտիւացումը:

Կոլլեկտիւ տնտեսութեան հիմնական առաւելութիւնն այն ե, վոր նա հնարաւորութիւն ունի գործադրելու լայն չափերով մեքենաներ, հնարաւորութիւն ունի կաղմակերպելու աշխատանքը ե ստանալու լավագույն արգիւնքներ: Բերքերը կոլլեկտիւ տնտե-

սություններում 20—30 տոկոսով ավելի բարձր են, քան միանձնյա տնտեսություններում: Բոլոր կոլտնտեսություններ 55-ից մինչև 80 տոկոսն անցել է բազմադաշարի: Բոլոր կոլտնտեսությունների մոտ 50 տոկոսը գործադրում է մաքուր տեսակի սերմեր: Բոլոր տրակտորները 80 տոկոսը զտնվում է կոլլեկտիվ տնտեսությունների ձեռքում: Ուղիքայնացում մեկ գեւայտին զարի մշակելու համար միջակ դյուզացին գործադրում է 12,2 ուր, կուլակը 11,3 ուր, իսկ կոլտնտեսությունը 7,8 ուր: Նույն տարածության վրա հազանբույր չըջանում, վորտեղ միանձնյակների մոտ աշխատում է 34 դոլման, 64 տափան, 27 ցանոց մեքենա, կոլտնտեսություններում աշխատում է 14 դոլման, 8 տափան, 5 ցանոց մեքենա: Նույն պատկերն ունենք նաև մի ուսողի յեկամտի նկատմամբ:

Նոյսիբրիբակի չըջանի «Մոյրա» կոմունայում յուրաքանչյուր շնչին ընկնում է 288 ուրլի ընդհանուր արտադրանք: Նրան մոտ դյուզում—, Միսկում—, միանձնյակին ընկնում է 97 ուրլի: Իսկ Կոյրլիյակի չըջանում՝ 56 ուրլի: Կոլտնտեսությունների առավելությունը նրանումն է նաև, վոր նրանք մշակում են իրենց արտադրանքներն ուսանդակիչ ձեռնարկություններում, վորը նույնպես ավելացնում է դյուզատնտեսության յեկամտայնությունը: ԽՍՀՄ բոլոր կոլտնտեսություններում գործում են արդեն 2000-ից ավելի ուսանդակիչ ձեռնարկություններ: Վերջապես կոլտնտեսությունների հսկայական առավելությունը նրանց ապրանքայնությունն է. միանձնյակի մոտ ալդ հատում է 10—12 տոկոսի, իսկ կոլտնտեսությունների մոտ՝ 30—40 տոկոսի, ալսինքն՝ կոլտնտեսությունը մեկ հեկտար հողից կարող է շուկա հանել 3—4 անգամ ավելի հաց, քան թե միանձնյա տրնտեսությունը:

Գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումն անհնար է միանձնյա տնտեսության բազայի վրա: Միայն կոլլեկտիվացումը կապահովի բոլոր նորագույն մեքենաների գործադրությունը: Միայն կոլլեկտիվացման ու տեխնիկական վերակառուցման հիման վրա կհաջողվի չքափոր ու միջակ դյուզացիական մասսաների նյութական ու կուլտուրական մակարդակի հսկայական բարձրացման, կարելի յե արմատախիլ անել կապիտալիզմը մեր յերկրում է ապահովել սոցիալիզմի հաջող շինարարությունը:

4. Չնայած կոլտնտեսությունների բոլոր շահերին, դյուզացիության համար միանգամից նրանց անցնելը դժվար է, վորով—

հետեւ դյուղացիին կապված եւ միանձնյա տնտեսութեան դարավոր տրադիցիաների հետ :

Գյուղացիութեան լայն մասսաները անհամեմատ ավելի հեշտ են ներդրովում կոոպերացիայի ամենապարզ ձեւերին, եւ ասլա անձնական փորձով դալով այն յեղրակացութեան, վոր անհրաժեշտ եւ շահավետ եւ անցնել կողքէկտիւ տնտեսութեաններին : Այդ իսկ պատճառով դյուղատնտեսական կոոպերացիայի ամենապարզ ձեւերը հսկայական դեր են խաղում գյուղի սոցիալիստական վերակերտման մեջ : Այդ ուղղութեամբ մենք ունենք լուրջ հաջողութեաններ : Գյուղատնտեսական կոոպերացիայի գծով ընդգրկված եւ դյուղացիական բոլոր տնտեսութեաններին 40 տոկոսից ավելին :

Հատուկ նշանակութիւն ունեն արտադրական-սպառման կոոպերացիայի առանձին ձեւերը . ճակնդեղա-չաքարային, բամբակային, յուղադործ, կտավատային եւ այլն : Կոոպերացիայի այդ տեսակների գծով մենք գործ ենք ունենում վոչ միայն պատրաստի արտադրանքի սպառման հետ, այլ եւ փաստացի ոգնութիւն ենք ցույց տալիս կազմակերպելու եւ բարելավելու համար գյուղատնտեսութիւնը կոնտրակտացիայի (ցանքների համար նախնական կանխավճարներ տալու) միջոցով, մատակարարելով հանքային սպարաւոտանութեւր, կազմակերպելով վարձու կայաններ եւ այլն :

Մեծ դեր եւ խաղում արտադրական-սպառման կոոպերացիայի ամբողջման գործում գործարանների կառուցումը՝ կոոպերացիւած գյուղացիական տնտեսութեանների միջերջների վերամշակման համար : Ֆուդիկենտրոնը վերջին յերեք տարվա ընթացքում կառուցել եւ 137 գործարան (վորոնցից յուրաքանչյուրը վերամշակում եւ տարեկան 75 մինչեւ 100 հազար փութ կաթ), 304 մանր գործարաններ եւ վերանորոգել եւ 725 հին գործարան : Նույն այդ ժամանակամիջոցում կառուցված եւ 166 կարտոֆիլահար, բամբակագործ, յուղադործական եւ այլ գործարաններ : Կոոպերացիայի այդ տեսակներն ունեն մեծ նշանակութիւն միանձնյա գյուղացիական տնտեսութեանները կողքէկտիւ ձեւերին անցնելու համար նախապատրաստման գործում : Վերջին տարիներս ավելի ու ավելի մեծ դեր եւ սկսել խաղալ գյուղատնտեսական կոոպերացիայի բոլոր ձեւերում կոնտրակտացիան : Կոնտրակտացիան հատուկ նշանակութիւն ունի չքավոր ու միջակ տնտեսութեաններին համար, վորովհետեւ նա ապահովում եւ նրանց չըջանառու միջոցները՝ նյութական տեսակներից նրանց համար ամենածանր չըջանում : Բացի դրանից, կոնտրակտացիայի հետ տրվում եւ սերմացու, ար-

տաղբահան ողնություն և թիմիական պարարտացում : Կոնտրակ-
տացիան մեծ ազդակ և գյուղացիների կոոպերացման համար :
1929 թվի զարնանացանի կամպանիայի միջոցին կոնտրակտացիա-
յով բնագրկված ևր 10 միլիոն հեկտար ցանքս :

Գյուղացիական տնտեսությունների կոոպերացումը թույ-
լատրում և անմիջական տնտեսական սերտ կապ ստեղծել գյուղա-
տնտեսության ու սոցիալիստական արդյունաբերության միջև և
ապահովում և վերջինիս ազդեցությունը գյուղատնտեսության՝
սոցիալիստական ուղիով զարգացման վրա :

5. Ամրացնելով կոլլեկտիվ յոնտեսությունները, ծավալելով
կոոպերատիվ շինարարությունը գյուղում, խորհրդային իշխա-
նությունը միաժամանակ ամրացնում և խորհրդային տնտեսու-
թյունները, վորպես հեմակետեր ծավալելու համար գյուղատըն-
տեսության սոցիալիստական ձևերը :

Վերջին տարիներս խորհրդային տնտեսությունների աշխա-
տանքը զգալիորեն բարելավել և : Յանքսերի տարածությունն ա-
ճում և տարեցտարի : Տրակտորների քանակն ալելանում և : Բեր-
քին զգալիորեն բարձրացել և :

Գյուղատնտեսության մեջ սոցիալիստական շինարարության
ուժեղացման և հացի քանակն ալելացնելու համար խարհրդային
իշխ. նոր խորհրդ. տնտ. շինարարութ. և ծավալում Մերձվուզ-
յան, Հյուսիսային Կովկասի, Կապակոտանի ու Սիրիերի ամայի
տարածություններում : Այդ նոր խորհրդային տնտեսություննե-
րը կազմակերպվելու յեն տեխնիկայի բոլոր նորագույն նվաճում-
ների գործադրությամբ և մոտակա 5 տարում պետք և յերկրին
տան 100 միլիոն վութ ապրանքային հաց : Խորհրդային տնտեսու-
թյունները հսկայական դեր են խաղում նաև գյուղատնտեսության
վերակառուցման մեջ, արտադրական ողնություն ցույց տալով
չքալոր ու միջակ տնտեսություններին մեքենաներով, զտած սեր-
մացվով, ագրոօղնությամբ : Իրենց փորձով խորհրդային տնտե-
սությունները սովորեցնում են գյուղացիությանը գյուղատնտե-
սությունը ճիշտ վարելը : Այսպես, որինակ՝ Ողեսսայի չրջանի
Շեհենկովսկի խորհրդային տնտեսությունն իր տրակտորներով
մշակում և չրջակա գյուղերի բնակչության հողերը : Այդ փորձը
ներկայումս տարածվում և մեր Միության խորհրդային տնտե-
սությունների մեծամասնության կողմից :

6. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման
բոլոր խնդիրները լուծել խորհրդային իշխանությունը կարող և

միայն այն դեպքում, յերբ կունենա բարձր զարգացած սոցիալիստական արդյունաբերութիւն: Մեր յերկրի ինդուստրացումը զարկ է տալիս տեխնիկական կուլտուրաների ցանքսերի զարգացմանը մեր յերկրում, աջակցում է գյուղատնտեսական մթերքների վերամշակման հատուկ ձեռնարկութիւնների, գործարանների, ելեկտրոնների, սառցարանների աճմանը: Բարդ գյուղատնտեսական մեքենաներն իրենք հզոր ազդակ են գյուղատնտեսութեան կուլեկտիվացման համար: Այս տեսակետից առանձին դեր պետք է խաղան տրակտորային սյուները, վորոնք աջակցում են ամբողջ րնակալայրերի ու շրջանների կուլեկտիվացման: Գյուղատնտեսական մեքենաշինարարութիւնը 1928—29 թիւին ավելի քան յերկու անգամ անցել է նախապատերազմյան մակարդակը և նրա արտադրութիւնն այս տարի հաւասարվել է 290 միլիոն ռուբ.: Գյուղատնտեսութեանն ուղարկված է մոտ 40 հազար տրակտոր: 1929 թիւին Պուտիլովյան գործարանը բաց կթողնի 3 հազար տրակտոր, և բացի դրանից, արտասահմանից կստացվի մոտ 10 հազար տրակտոր: Ստալինգրադում կառուցվում է տրակտորի գործարան, վորը տարեկան պետք է արտադրի 10 հազար տրակտոր և վորը պետք է սկսի աշխատել յերկու տարուց հետո: Պուտիլովյան գործարանը պատվեր է ստացել տրակտորների արտադրութիւնը հասցնել տարեկան 10 հազար հատի:

Ռոստովում, Ուրալում, Ուկրայնայում, Բելոռուսիայում կառուցվում են գյուղատնտեսական մեքենաների հզոր գործարաններ: Հնդկամյա պլանով գյուղատնտեսական մեքենաների արտադրութիւնը հնդկամյա պլանի վերջում պետք է հասնի տարեկան 610 միլիոն ռուբլու, իսկ քիմիական պարարտանյութերի արտադրութիւնը՝ 7 միլիոն տաննի:

Միայն հիւրապես զարգացող ինդուստրիան կապահովի գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակերտումը:

Զրույց 14-րդ. — Կուլեկտիվ տնտեսութիւնների մասին («Յերկամյա ծրագիր» եջ 248—253):

ԶՐՈՒՅՑ 15-ՐԴ

ԲԵՐՔԱՅՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԶՐՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Պարզաբանել կարմիր բանակայիններին ՈՍՀՄ Կենտգործկոմի IV նստաշրջանի վորոշումների ելութիւնը չքալոր ու միջակ միանձնյա տնտեսութիւններում բերքատուութիւնը բարձ-

բացնելու մասին առաջիկա 5 տարւոյն ընթացքում 30—35 տոկոսով եւ հոլտնտեսութեանն հետո՝ ու խորտնտեսութեանն հետո՝ 60 տոկոսով :

Յույց տալ այն կոնկրետ միջոցառումները , վորոնք պետք եւ ապահովեն այդ վորոշման կիրառումը :

ԶԲՈՒՅՑԻ ՊԼԱՆԸ

1. Յարական կառավարութեան եւ խորհրդային իշխանութեան քաղաքականութեանն հետո՝ զյուզացրական գաշտերի բերքատուութեան բարձրացման նկատմամբ :

2. Խորհրդային իշխանութեան միջոցառումները բերքատուութեան բարձրացման համար :

3. Բերքատուութեան բարձրացումն ու մեր գլխավոր գիծը զյուզատնտեսութեան սոցիալիստական վերակերտման վերաբերյալ :

4. Պայմաններ՝ նշված ծրագիրը կիրառելու համար :

1. Կուտակցութեանն ու խորհրդային իշխանութեանն , միջոցներ ձեռք առնելով զյուզատնտեսութեան լայն կոլլեկտիւացմանն ու խորհրդային տնտեսութեանն հետո՝ շինարարութեան կիրառման համար , միեւնոյն ժամանակ լայն ծրագիր են կազմում , վորը պետք եւ ապահովի չքավոր ու միջակ զյուզացրական միանձնյա տնտեսութեանն հետո՝ վերելքը : Բանը նրանումն եւ , վոր դեռ մի շարք տարիներ միանձնյա տնտեսութեանն հետո՝ պետք եւ հիմնական աղբյուր ծառային հացամթերումների ու համույթ մթերելու համար : Բացի դրանից , միանձնյա տնտեսութեանն հետո՝ բարձրացման ճանապարհին (ծրագրված միջոցառումների կիրառման հետեանքով) կարելի կլինի ուժեղացնել զյուզացրական տնտեսութեանն հետո՝ կոոպերացմանն ու կոլլեկտիւացման թափը : Վերջապես՝ հաջող սոցիալիստական շինարարութեանն հետո՝ պահանջում եւ ամբողջ զյուզատնտեսութեան արտադրողական ուժերի բարձրացում :

ԽՍՀՄ Կենտրոնական IV նստաշրջանը մի վորոշում եւ ընդունել , վորպէսզի առաջիկա հնգամյակում բարձրացնել չքավոր ու միջակ միանձնյա տնտեսութեանն հետո՝ բերքատուութեանն 30—35 տոկոսով (կոլտնտեսութեանն հետո՝ ու խորտնտեսութեանն հետո՝ բերքատուութեանն՝ 60 տոկոսով) : Շնորհիւ Հոկտեմբերյան հեղափոխութեան այդ խնդիրը միանգամայն հնարավոր եւ դարձել :

Նախ քան Հոկտեմբերը զյուզատնտեսութեան բերքատուութեանն տարեկան բարձրանում եր միայն 1 տոկոսով : Զարգաց-

ման ալդարիի դանդաղ թափի պատճառը կալվածատիրութ-
յունն եր ու ցարական ուժիւմ, վորոնք հնարավորությունն չե-
լին տալիս գյուղացիական տնտեսություններին դարգանալու :

Կալվածատերերի հողատիրությունը առաջացնում եր հսկա-
տկան միջնաշերտ (чрезполосица) : Կալվածատերերն ու բանկե-
րը ծծում ելին գյուղացիներից տարեկան մոտ 500 միլիոն ռուբ-
լի (չհաշված հարկերը և ցարական կառավարության այլ տուրքա-
դրումները) : Յարական կառավարության ամբողջ քաղաքականու-
թյունն ուղղված եր նրան, վոր ոգնի կալվածատիրոջն ու կուլա-
կին : Այն ժամանակ, յերբ մեկ ու կես տասնյակ տարվա ընթաց-
քում կալվածատերերին տրված եր մոտ 2 միլիարդ ռուբլի (նրանց
պարտքը բանկերին), գյուղացիական տնտեսությանն ոգնելու տա-
րեկան հատկացվում եր 75 միլիոն ռուբլի և այն ել ոգտագործվում
եր գլխավորապես վարկավորելու համար կուլակային տնտեսու-
թյուններին՝ հողեր գնելու նպատակով (վոր մեծ մա-
սամբ նրանք գնում ելին չքավորներից) : Յարական կառավարու-
թյունը շատ քիչ ուշադրություն եր դարձնում գյուղացիական
տնտեսությունների հողաշինարարության և գյուղատնտեսու-
թյան ինդուստրացման վրա : Յարական հասարակակարգի գոյու-
թյան ամբողջ ընթացքում հողաշինարարության յենթարկված եր
1½ միլիոն կուլակային տնտեսություն, իսկ գյուղատնտեսական
մեքենաների արտադրությունը տարեկան չեր անցնում 70 միլիոն
ռուբլուց :

Միանգամայն այլ ե մեղանում : Խորհրդային կառավարու-
թյան կողմից գյուղատնտեսությանն արած հատկացումներն ա-
ճում են տարեցտարի : Ընթացիկ տարում գյուղատնտեսությանը
հատկացված ե մեկ միլիարդ ռուբլուց ավելի, ըստ վորում դրա
մեծ մասն ուղղված ե չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսու-
թյուններին ոգնելու գործին : Հողաշինարարությունը ՌՍՖՍՀ մեջ
ընդգրկել ե ամբողջ տարածության 17 տոկոսը, գյուղամիջյան՝
30,5 տոկոսը, ՈւՍՖՍՀ գյուղերի ներսում՝ 20,4 տոկոս, Բելո-
ռուսիայում՝ ամբողջ տարածության 29 տոկոսը : Գյուղատնտեսա-
կան մեքենաների արտադրությունն ընթացիկ տարում հասել ե
արդեն 190 միլիոն ռուբլու :

10 միլիոն հեկտար տարածության վրա գործադրվում ե ար-
դեն բազմադաշտ . խոտացանքի տակ մենք արդեն ունենք ամբողջ
ցանքերի 1 տոկոս (2,3 միլիոն հեկտար) : Գյուղատնտեսական

կոոպերացիան կառուցել և ու կառուցում և տասնյակ դործարաններ վերամշակելու համար գյուղատնտեսութան միջոցները :

Սուրհրդային իշխանութան քաղաքականութիւնը մեզ հնարավորութիւն և տալիս միանգամայն այլ թափով բարձրացնել գյուղատնտեսութան բերքատուութիւնը :

2. Բանգյուղակազութիւնը հատուկ ուսումնասիրութիւն և կատարել 1000 տոննայովու գյուղացիական տնտեսութիւնների, վորոնց տարեկան բերքը զգալիորեն գերազանցում և շարքային գյուղացու բերքը տարեկանի (ոտ) նկատմամբ 70 տոկոսով, աշնանացան ցորենի նկատմամբ՝ 114 տոկոս, զարնանացան ցորենի՝ 41 տոկոս, վարսակի՝ 45 տոկոս և զարու՝ 37 տոկոս :

Իրենց տնտեսական կարողութեամբ այդ 1000 տնտեսութիւնները հանդիսանում են 65,9 տոկոս միջակային, 11,9 տոկոս չքավոր և 22,2 կուլակային, այսինքն՝ նրանց հիմնական մաստան չքավոր-միջակային և : Միաձի և յերկձի տնտեսութիւնները նրանց մեջ կազմում և 75 տոկոս : Բերքատուութեան բարձրացմանն այդ տնտեսութիւնները հասել են, զործադրելով մի շարք պարզ աղբորմիջոցառումներ (բաղմադաշտ, սերմացւիի դտում, դտած, սերմերի ցանք և այլն), այսինքն՝ այնպիսի միջոցներով, վոր կարելի յի զործադրել յուրաքանչյուր չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսութեան մեջ :

Փորձնական կայանների տվյալները ցույց տվեցին, վոր այդ արդիւնքները կարելի յի ստանալ ամենուրեք :

3. Յենկելով այդ վորձից, Կենտդործկոմի 4-րդ նստաշրջանը նշել և միջոցառումներ, վորոնք պետք և ապահովեն գյուղացիական դաշտի բերքատուութեան բարձրացումը 30-35 տոկոսով :

Նշված միջոցառումները հանգում են հետեյայլին .

ա) Փոխել առաջիկա 5-6 տարում բոլոր վոչ աղնվացեղ սերմերը ըստ շրջանների վորձված լավորակ սերմով, դադարեցնելով լավորակ սերմերի զործադրութիւնը պարենաւորման կարիքների համար : Փորձը ցույց տվեց, վոր հաճախ հենց միայն այս միջոցառումն ապահովում և բերքատուութեան բարձրացումը 20-25 տոկոսով :

Այդ նպատակի համար ՌՍՖՍՀ լավորակ սերմի Փոնդը հասցնելու յի 75 միլիոն իթի (1,25 միլիոն տոնն), ներառելով լավորակ սերմի պետական Փոնդի մեջ կտաւատի, բաղմամյա խոտերի, արմատաաղտուղների և բանջարանոցային բույսերի սերմացուն :

Նույն այդ նպատակով այս տարվանից դոյացվելու յի վոլոստային ու գյուղական տեղական Փոնդեր լավորակ սերմացւի, ող-

տաղործելով դրա համար լիովին դյուղատնտեսական կոոպերացիայի սերմացվի ֆոնդերը: Յուրաքանչյուր վոյստում հիմնադրվելու յեն լավորակ և բարելավված սերմացուների հողամասեր, գործադրելով մրցանակարաշխություններ այն տնտեսությունների համար, վորոնք անցել են լավորակ սերմացվի: Մոտազատարիներում պետք և ավելացվեն հատկացումները՝ վերահսկիչ ու փորձնական կայանների, սերմացվի խորհանտեսությունների, սերմնարուծական կոոպերացիայի աշխատանքների ծավալման համար, վորպեսզի դյուղացիական տնտեսությունները լիովին ապահովված լինեն լավորակ սերմացվով վերոհիշյալ ժամկետում:

Լավորակ սերմացվի արժեքն իջեցվելու յե: Այդ միջոցառումների կիրառումը հնգամյակի վերջում կտա ՌՍՖՍՀ լավորակ սերմացվով ցանքսերի 77 տոկոս, ՌՍՍՀ՝ 100 տոկոս, ԲՍՍՀ՝ 60 տոկոս: Այդ միջոցառումը պետք և տա բերքատվության ավելացում ՌՍՖՍՀ՝ 10 տոկոս, ՌՍՍՀ՝ 16 տոկոս և ԲՍՍՀ՝ 12 տոկոս:

բ) Մտցնել յերեք տարվա ընթացքում ամենուրեք սերմերի պարտագիր գտում ու ընտրություն, ընդարձակելով դրա համար սերմադուրից կայանների ցանցը, կադակերպելով շարժական սերմապտիչ գումակներ, վորպեսզի ողտադործվի տրիերների աշխատանքն ամբողջ տարվա ընթացքում: Ներկայումս յեղած 34 հազար տրիերներն ողտադործվելու յեն այնպես, վոր 3·000 տրիերը լրիվ բեռնավորումով կարողանան կատարել այդ նույն աշխատանքը: Զբաղոր տնտեսությունների համար սերմացուն գտվելու յե ձրի: Նույն այդ նպատակով սահմանվում են հատուկ արտոնություններ հողային հասարակությունների համար՝ նրանց կողմից տրիերներ զնելու ժամանակ: Մենք այս տարի կառուցել ենք տրիերի գործարան, վորը մեղ ընթացիկ տարում կտա մի քանի հազար տրիեր, իսկ հետագա տարում՝ 18·000 տրիեր արտասահմանյան զներից վոչ բարձր արժեքով: Նոր դյուղմիասհարկով տրիերներն աղատվում են տուրքադրումից:

Սերմացվի ամենուրեք գտումը կարող և տալ բերքատվության բարձրացում ՌՍՖՍՀ՝ 5,2 տոկոս, ՌՍՍՀ՝ 2 տոկոս և ԲՍՍՀ՝ 7,5 տոկոս:

դ) Բարելավել վարձու կայանների աշխատանքը (բեռնավորել նրանց ամբողջ տարվա ընթացքում, մատակարարել անհրաժեշտ նյութեր ու անհրաժեշտ միջոցներ): Ներկայումս ցանիչ մեքենան ողտադործվում և տարվա մեջ 6 օր, փոխանակ անհրաժեշտ 30 օրվան:

դ) Միջոցներ ձեռք առնել մոտադա ժամանակներում, վերսկսելի ճիշտ սպասարկած լին արակտորները (արակտորներն սպասարկած լին վոչ միայն վարի համար, այլև մտցնել յերկու և յերեք հերթախախի աշխատանք դաշտային աշխատանքների տաք շրջաններում. մատակարարել վառելանյութ, սահահատի մասեր, վերանորոգում և այլն): Այդ նպատակով արակտորները չեն ցրվելու ամբողջ Միութան մեջ, այլ կենտրոնացվելու յեն արտադրական գլխավոր շրջաններում. ավելացվելու յե արակտորային կայարանների ու արակտորային ջոկատների քանակը:

ե) Մենչե հնդամակի վերջը կիրառել կրացում, վոչ սեահոգային շերտի 25 տոկոս վարելահողում և 3 միլիոն հեկտարից ավելի լրացուցիչ պարարտացում լուսածնային ալյուրով հատիկային մշակութների համար: Այդ նպատակով ուժեղացվելու յե դյուդացրական անտեսութունների վարկավորումը՝ հանքային սպարարտանյութեր ստանալու համար:

զ) Մեծ ուշադրություն նվիրել միաստատունների դեմ մղվող պայքարին, վորոնց միջոցով ամեն տարի փչանում և հսկայական քանակությամբ հաց: Համաձայն պրոֆեսսոր Յագեակու ամեն տարի միաստատուններից փչանում և կուրակի նահանգում բերքի 28 տոկոսը, Տամբովի նահանգում՝ 31 տոկոս, Լենինգրադի շրջանում՝ 36 տոկոս: ՌՍՖՍՀ Հողօդկոմատի կատարած հաշիվներով դաշտային միները ամեն տարի տալիս են 45 միլիոն ուրբու վնաս, մորելը՝ 30 միլիոն ուրբու, աշնանացանային սովկան՝ 65 միլիոնի, փոշեսունկը՝ 172 միլիոնի, Հասսերի ճանճը՝ 35 միլիոնի, դաշտային կողինջը՝ 10 միլիոնի: Նույն հաշիվներով մեկ ուրբուի գնելով միաստատունների դեմ պայքարի մեջ անտեսվում և 11—15 ուրբու: ԺՏՍ առաջ խնդիր և ծառանում առաջիկա 2—3 տարվա ընթացքում ապահովել դյուդատնտեսությունն անհրաժեշտ քիմիական նյութերով միաստատունների դեմ պայքարելու համար: Ըստ յեղած տվյալների միաստատունների դեմ պայքարից կարելի յե բերքատվությունն ավելացնել 9 տոկոսով:

Վերահիշյալ բոլոր միջոցառումներն իրագործելու համար կարողացվի հողաշինարարությունը: Հողաչափերի արտադրողականությունն ավելացվելու յե: Հաճախակի հողաբաժանումները սահմանափակվելու յեն: Առավելագույն աջակցություն և ցույց տրվելու հողի համայնական մշակմանը և համայնական անասնապահությանը:

Կոնտրակտացիայի պայմանագրերում նախատեսվելու յեն

ամենապարզ ազրիկուլտուրական միջոցառումների այն միմիումը, վոր պարտադիր և կոնտրակտացիայի յենթարկվող տնտեսությունների համար, միջոցներ ձեռք առնելով ազրոողնություն ցույց տալու բնակչութանը՝ իր վրա վերցրած պարտականությունների կատարման ժամանակ: Գյուղմիասնաբերով ղեղջեր են տրվում այն տնտեսություններին, վորոնք ազրոմիջոցառումներ են ձեռնարկում. ղեղջերը 5-ից 10 տոկոս են, նայած նրան, թե այդ միջոցառումները ձեռնարկվում են հողային համայնքի թե միայն առանձին տնտեսությունների կողմից:

Կենտրոնիկոմի նստաչրջանը նույնպես ընդունեց մի շարք վորոշումներ, վորոնք ապահովում են բնակչութանն ազրոողնության լայն ծախվումը, առանց վորի հնարավոր չե իրագործել գյուղական բնակչության ազրողրադիտության բարձրացման հսկայական նշանակությունը շեշտող միջոցառումները:

Բերքատվության բարձրացմանը վերաբերող միջոցառումների կիրառումը, լուծելով գյուղատնտեսության արտադրողականության ղեղալի բարձրացումը, այնուամենայնիվ չի լուծում գյուղատնտեսության՝ սոցիալիստական հիմունքներով վերակերտման հիմնական խնդիրը, վորովհետե նշված միջոցառումները չեն փոխում գյուղացիական տնտեսության, վորպես մանր, բաժան-բաժան տնտեսության բնույթը: Գյուղացիական տնտեսության հիմնական բարձրացումը հնարավոր և միայն խոշոր կոլլեկտիվ տնտեսության հիման վրա, վորտեղ կզործադրվեն խոշոր մեքենաներ ու տեխնիկայի նորագույն նվաճումները: Միայն խոշոր տնտեսությունը հնարավորություն և տալիս ոգտագործելու մեքենայացման բոլոր շահավետ կողմերը: Այդ և ցույց տալիս նաև արտասահմանի փորձը, վորտեղ բերքատվության բարձրացումը ներկայումս հիմնվում ղլխավորապես՝ հսկայական չափերի բարդ ու բարդագույն մեքենաների ղործադրության վրա, վորոնք կատարյալ հեղաշրջում են մտցնում գյուղատնտեսության արտադրության տեխնիկայի մեջ:

Առաջ քաշելով գյուղատնտեսության վերակառուցման խնդիրը, մենք պետք և, իհարկե, այդ խնդիրը լուծենք նորագույն բարդ մեքենաների (կոմբայների) ոգտագործման հիման վրա, վորոնք իրենք հալածում են հացը, տեղն ու տեղը կախում (սպասարկելով որական 6-ից 9 հեկտար), ոգտագործելով խոտհար մեքենաներ, վորոնք քաղում են խոտը, չորացնում, ղարսում և կրում տուն: Կենտրոնիկոմի նստաչրջանն առաջարկել և Համ. ԺՏՍ կար-

զի բերել շարքային ցանիչների արտադրությունն այն հաշվով, վոր ապահովիլի ամբողջ ցանքապաշտի տոնվաղն 50 տոկոս շարքացանք: Համ. ԺՏԽ ծրագրով նշված և գյուղատնտեսական մեքենաների ու բիծիական պարարտացման խոշոր աճում: Հնդամյակի վերջում գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը կհասնի տարեկան 610 միլիոնի, այսինքն՝ մենք մի տարում կտանք համարյա այն բոլոր մեքենաների յերկու յերրորդը, ինչ գյուղացիությունը կուժակած և յեղել մինչև հեղափոխությունը: Ընդամենը 5 տարեալ ընթացքում գյուղացիությունը կվաճառվի 2 միլիարդ ուսրլու մեքենա և ամեն 1 հեկտար հողին կրնին համարյա 20—22 ուսրլու մեքենա (փոխանակ այժմյան 11 ուսրլու): Տրակտորների արտադրությունը Ստալինգրադի գործարանում կհասնի մինչև 40 հազար մեքենայի. այսինքն՝ հնդամյակի վերջում գյուղատնտեսությունը կտանք տարեկան մոտ 400 հազար տրակտոր:

Հանքային պարարտանյութերի ընդհանուր արտադրությունը կհասնի տարեկան 7 միլիոն տոննի: Սուպերֆոսֆատների արտադրությունը կավերանա 23 անգամ, ալյումային պարարտացման արտադրությունը՝ 63 անգամ, լուսածնային (ֆոսֆորի) ալյուրինը՝ 7 անգամ: Կալիյի պարարտանյութերի արտադրությունը կհասնի 1.500 հազար տոննի:

Կենսագործկամի նոտաշրջանն առաջարկել և կազմակերպել նույնպես կոմբայների, խոտհար և այլ խոշոր մեքենաների արտադրություն:

Այդ ծրագրի հիման վրա մեզ կհաջողվի վոչ միայն բարձրացնել գյուղատնտեսության բերքատվութունը, այլև ալիլի արագ քայլերով առաջ շարժվել դեպի գյուղացիական տնտեսությունների կոլլեկտիվացում և դեպի նոր տեխնիկական հիման վրա նրանց վերակերտումը:

Գյուղատնտեսությունը, յերբ նորագույն մեքենաների զործադրության և անցնում կապիտալիստական յերկրներում, քայքայվում և բազմամիլիոն չքավոր ու միջակ ընակչությունը: Այդ տեղի յե ունենում Ամերիկայում, Գերմանիայում և այլ յերկրներում: Մանր գյուղացիական տնտեսությունն ի վիճակի չի լինում զործադրել բարդ մեքենաներ, (Գերմանիայում մինչև 2 հեկտար հող ունեցող մանր տնտեսություններից ոգտագործում և շոգեգութաններ միայն տնտեսությունների 18 տոկոսը, իսկ 100 հեկտարից ալիլի հող ունեցողների՝ 50 տոկոսը), այդ պատճառով ևլ

անխուսափելիորեն նրանք չեն դիմանում խոշոր տնտեսութեան մրցման: Այլ բան և խՍՀ Միութեան մեջ, վերտեղ պետական իշխանութիւնն ոգնութիւն և ցույց տալիս չքաւոր ու միջակ տընտեսութիւններին կոլլեկտիւ աշխատի տնտեսութիւններին անցնելու մեջ, վերտեղ լիովին կարելի չե ոգտադործել բոլոր նորագույն մեքենաները:

Յուրաքանչյուր չքաւորի ու միջակի և յուրաքանչյուր կարմիր բանակայինի խնդիրն ե՝ ուսումնասիրել IV նստաշրջանի վորոշումները և աջակցել նրանց կիրառմանը:

4. Կենտգործկոմի IV նստաշրջանի՝ բերքատուութեան բարձրացման վերաբերյալ նշած միջոցառումները կարող են իրադործվել միայն այն դեպքում, յերբ դյուղացիութեան չքաւոր ու միջակ մասսաները լայն չափով ներգրավվեն բերքատուութեան բարձրացման հարցի քննարկմանը՝ բերքատուութեան բարձրացման շրջանային, դավառային ու յերկրային կոնֆերանսների միջոցով: Հարկաւոր ե ձգտել, վորպեսզի վորոշումներ ընդունվեն բոլոր դյուղացիական տնտեսութիւնները կողմից պարտադիր ամենապարզ աղբոմիջոցառումների գործադրութեան մասին:

Մանրութիւն.—Այս դրույցն անցնելը պետք ե լրիւ չափով կապել բերքատուութեան բարձրացման վերաբերյալ տեղական կադմակերպութիւնների ձեռնարկած միջոցառումների հետ:

Զրույց 16—17. Գյուղմիտահարկի մասին (մշակել ըստ «Վայեն Վեստնիկի»):

Զրույց 17—18. Ինչպես և խորհրդային իշխանութիւնը վերաբերվում չքաւորին, միջակին և կուլակին («Յերկամյա ծրագիր» եջ 275—281):

ԶՐՈՒՅՑ 19—ԲԴ

ՀԱՄԿԿ (Բ) — ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ Ե ԽՍՀՄ-ՈՒՄ

ԶՐՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿ

Բացատրել կարմիր բանակայիններին, վոր կուսակցութիւնը գլխաւորում ե սոցիալիստական շինարարութիւնը մեր յերկրում նշելով նրա ուղիները մեր հեղափոխութիւն տարբեր շրջաններում, վոր ՀամԿԿ(Բ) ճիշտ քաղաքականութիւնն ապահովում ե մեր սոցիալիստական շինարարութեան հաջողութիւնը և դյուղի ու քաղաքի կապիտալիստական ելեմենտների աստիճանաբար վտարումը:

Զրույցի պլանը

1. Սոցիալիստական շինարարության գեղափարության դրժվարությունները :

2. Կուսակցության սոցիալիստական շինարարության գեղափարությունը տարրեր չըջաններում :

3. ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության ասպարիզում ձեռք բերած նվաճումները, վերջին հետևանք Համկկ(Բ) ճիշտ գեղափարության :

1. Բայձեիկների կուսակցությունը վաղ միայն ղեկավարել է բանվոր դասակարգին նրա սոցիալիստական հեղափոխության համար մղած պայքարում, այլ և ղեկավարում է սոցիալիստական շինարարությունը ԽՍՀՄ-ում :

Յեթև բանվոր դասակարգը և նրա կուսակցությունը ունեցել են հսկայական փորձ բուրժուազիայի և կաթածատերերի հետ իշխանության համար մղած պայքարում, մինչդեռ այդ փորձը բանվոր դասակարգը չունի սոցիալիստական շինարարության դրժում : Դրությունն ավելի բարդանում էր նրանով, վոր սոցիալիզմ կառուցել հարկադրված էլին մեր յերկրի կուլտուրատերերիական հսկայական հետամնացության պայմաններում, խոչորազույն քայքայման պայմաններում, վորպես հետևանք իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների :

Այս խնդիրը կարող էր միայն աշխարհի կուսակցության ուժերի համեմատ լինել, վորը քաջ զիտեր հասարակական դարդացման որենքները, վորը զինված էր աշխարհի զիտական թեորիայով, ինչպես Մարքսի և Լենինի ուսմունքն և, այսինքն՝ բայլչեիկյան կուսակցության ուսմունքը :

Իհարկե, այդպիսի հսկայական աշխատանքը, ինչպիսին սոցիալիստական շինարարության գեղափարությունն և աշխարհի կուսակցության շարունակական ջանքերը զարմալ վորպես պրակտիկ լսողոր, չեր կարող կատարվել առանց լուրջ թերությունների և նույնիսկ առանց սխալների :

2. Դեռ 1918 թ. ապրիլի 29-ին, Բրեստի հաշտությունը ստորագրելուց հետո, կուսակցությունը նշում և սոցիալիստական շինարարության առաջին զործնական ծրագիրը : Կապիտալիստական տարրերի դեմ միայն վարչական մեթոդներով հետադա պայքարի փոխարեն, մեթոդներ, վորոնք կիրառվեցին

Հսկտեմբերից հետո, մատնանշված եր կապիտալիստական տարրերի տնտեսական հաղթահարման մեթոդներին անցումը մեր սոցիալիստական արդյունաբերութեան վերականգնման միջոցով, նրա ռացիոնալացման, աշխատանքային ղեկսերակցին առհասարակ միջոցով, մասնագետներին ներգրավելու ու ոգտադործելու և քաղաքի ու դյուղի միջև նորմալ ապրանքաշրջանառութիւն հաստատելու միջոցով. այսինքն՝ մատնանշված ելին այն քաղաքականութեան հիմունքները, վորը տարվում եր քաղաքացիական պատերազմը վերջացնելուց հետո (նոր տնտեսական քաղաքականութիւն) :

Սակայն կուսակցութիւնը հարկադրված եր հրաժարվել իրեն կողմից նշված քաղաքականութիւնից՝ քաղաքացիական պատերազմի և իմպերիալիստական ինտերվենցիայի պատճառով : Կուսակցութիւնը մտքից «ուղղմական կոմունիզմի» քաղաքականութիւնը, այսինքն՝ այնպիսի մի քաղաքականութիւն, վորն ամենայալ ձևով ապահովեր մեր ժողովրդական տնտեսութեան արտադրանքի բաշխումը՝ քաղաքացիական պատերազմի ճակատներում ձեռք բերած հաղթանակի նվաճումների համար, միաժամանակ խստորեն ճնշելով կապիտալիստական տարրերին, այսինքն՝ բուրժուադիային և կուլակութեանը :

Քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո բայլեն-վիկների կուսակցութիւնը ամբողջ իր ուշադրութիւնն ուղղում ե բանվոր դասակարգի և դյուղացիական հիմնական մասսայի միջև տնտեսական դաշինքի ամրացման վրա, քաղաքի ու դյուղի միջև տնտեսական կապ հաստատելու վրա :

X-րդ համագումարում կուսակցութիւնը առաջադրում ե նոր տնտեսական քաղաքականութեանն անցնելու խնդիրը (մասնատրումի վերացում, ազատ ապրանքափոխանակութիւն և այլն) այսինքն՝ անցում այնպիսի քաղաքականութեան, վորը նշված եր նախքան քաղաքացիական պատերազմը : Նոր տնտեսական քաղաքականութեանն անցնելով կուսակցութիւնը նշում եր սոցիալիզմի կառուցման ուղիները ՈՍՀՄ-ում :

Կուսակցութիւնն ու խորհրդային իշխանութիւնը թույլ տվին ազատ առևտուր, իսկ այդպիսով և հնարավորութիւն տվին կուլակին ու նեպոմանին տնտեսապես դարգանալու. այս արեցին նրա համար, վորպեսդի սկզբնական շրջանում ոգտադործելով նրանց մեր տնտեսութեան վերականգնման և ապրանքաշրջանառութեան լայնացման համար, հետագայում ապրիճանաբար անցնեն նրանց տնտեսապես ճնշմանը : Այդ պատճառով ել

կուսակցությունը հիմնական ուշադրությունն ուղղեց պետական սոցիալիստական արդյունաբերության ամրացման վրա, չքափորին սղնթություն հասցնելու, միջակի հետ դաշինքի ամրացման վրա, պետական առևտրի և կոոպերացիայի գերի ուժեղացման վրա :

Կուսակցության ճիշտ ղեկավարության շնորհիվ բանվորներն ու գյուղացիները նեպի տարիններում ձեռք բերեցին նշանակալից հաջողություններ :

Արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը հասան մինչպատերազմյան մակարդակին և նույնիսկ մի քանի ճյուղերում անցան մինչպատերազմյան մակարդակից : Մասնավոր կապիտալի գերը վոչ միայն արդյունաբերության մեջ, այլ և առևտրի մեջ տարեց-տարի բնկնում և : Կոոպերացիան խոշոր արդյունքներ և ձեռք բերել վոչ միայն սպառողական կոոպերացիայի դժով այլ և գյուղատնտեսական կոոպերացիայի դժով : Յերկրի տնտեսությունը տարեցատարի աճում և : Բանվոր դասակարգի և գյուղացիության հիմնական մասսայի գրությունը նշանավոր չափով լավացել և : Մեր յերկրի տնտեսական աճման հիման վրա և տնտեսության մեջ սոցիալիստական ելքմենտների աճման հիման վրա անդադար ամրանում և բանվոր դասակարգի գիկատատւրան և ամբակուռ և դառնում աշխատավորների միաձուլությունը՝ Համկկ(ր) շուրջը :

Վերականգնման չրջանի վերջանալու հետ կուսակցությունը XIV համագումարում նշում և սոցիալիզմի ուղինելով մեր շարժվելու հետագա գլխավոր գիծը—յերկրի ինդուստրացումը, այսինքն՝ ԽՍՀՄ «մեքենաների ու սարքավորումների ներմուծող յերկիրը դարձնել մեքենաներ և սարքավորում արտադրող յերկիր, փորպետի աղպիսով ԽՍՀՄ, կապիտալիստական չրջափակման պայմաններում, յերբեք չվերածվի համաշխարային կապիտալիստական չինարարության կցորդի, այլ իրենից ներկայացնի ինքնուրույն, սոցիալիստականորեն կառուցվող մի միավոր» (— ումարի փորշումներից) :

Կուսակցության և խորհրդային իշխանության ինդուստրացման վերաբերյալ գիծն ապահովում և ծանր ինդուստրիայի զարգացումը, ապահովում և արտադրության միջոցների արտադրության զարգացումը, նոր յերկաթուղիների կառուցումը, մեքենաների մուտքը գյուղատնտեսության մեջ, աւխնիկայի նորադույն նվաճումների կիրառումը գյուղատնտեսության մեջ : Մեր յերկրի ինդուստրացումը ապահովում և և հետագա—

յում գների իջեցումը: Ինդուստրացման գիծը մեր յերկրում, դա ամենալավ ուղին է տնտեսության սոցիալիստական տարրերի ամրացման: Կուսակցությունը հատուկ ուշադրություն է նվիրում գեպի սոցիալիզմ տանող ուղիներով գյուղացիական տնտեսության շարժման ապահովությանը: XIV կուսակցական կոնֆերանսում և կուսակցական հաջորդական համագումարներում ու Համկի(ր) կի պլենումներում մասնանշված առանձին միջոցառումների հետ միասին կուսակցությունը նպաստեց գյուղատնտեսության կոոպերացիայի ամրացմանը: Կուսակցությունը ձգտում է մաքուր աշխատել չափով դարգացնել մեքենաշինարարությունը և արդյունաբերության մյուս ճյուղերը՝ գյուղատնտեսությունը սպասարկելու համար: Ամբողջ այս գործունեությունը մեջ կուսակցությունը կադմակերպում ու ոգնում է չքավորին և միջակին բնորոշում կուլակի:

Կուսակցության XV համագումարը, սոցիալիստական շինարարության ամրացման ասպարիզում մեր ձեռք բերած հաջողությունների հիման վրա, նշեց գյուղատնտեսությունը կուլակտիվիզացիայի յենթարկելու ել ավելի ուժեղացրած աշխատանքի և կուլակի վրա ել ավելի մճռական հարձակում գործելու քաղաքականությունը: XV համագումարն առանձնապես ընդգծեց գյուղատնտեսության արտադրական կոոպերացման նշանակության մասին, վորպես մի մճռական ողակ քաղաքի և գյուղի կապի ամրացման գործում:

Ղեկավարելով սոցիալիստական շինարարությունը, կուսակցությունը ամեն կերպ բանվորական ու գյուղացի աշխատավորական լայն մասսաներին ներգրավում է ակտիվ շինարարության մեջ՝ բանվորներին պատասխանատու ղեկավար պոստերի վրա առաջ քաշելու միջոցով. բանվորներից և աշխատավոր գյուղացիներից նոր տեխնիկական կադրեր պատրաստելու միջոցով. արտադրական խորհրդակցություններ, հակիչ հանձնաժողովներ կադմակերպելու, բանվորական գյուղատնտեսության դարգացման և ինքնաքննադատության լայն կիրառման միջոցով:

Կադմակերպելով և ուղղություն տալով սոցիալիստական շինարարությանը ԽՍՀՄ-ում, կուսակցությունը աշխատում է ամրացնել Միություն պաշտպանությունը, վորպեսպի ապահովի սոցիալիզմի կառուցման անընդհատ վերելքը: Կարմիր բանակի ներսում կատարած իր աշխատանքով, մեր տեխնիկական սպառազինման աճման մասին հոգացողությամբ, յերկրի ինդուստրա-

ցումով, խորհրդային հասարակայնության ուշադրութունը սե-
վեւելով պաշտպանութան կարիքների վրա, կուսակցութիւնը
այդպիսով ապահովում է մեր Միութեան մարտական հզօրու-
թիւնը թշնամիների հետ ունենալիք պայքարում :

Կապիտալիստական շրջափակման պայմաններում սոցիալիս-
տական շինարարութիւնը մաքսիմալ չափով ապահովելու հա-
մար, կուսակցութիւնը ձգտում է, վերջին հնարավոր է, յեր-
կարացնել կարճատեղ ազդարը և անհեղուկ անցկացնել խաղա-
ղութեան քաղաքականութիւնը : Խաղաղութեան քաղաքականու-
թիւնը, աջակցելով յերկրի սոցիալիստական տարրերի ամբողջ-
մանը, ամբացնում է մեր պաշտպանունակութիւնը :

Զրույց 20-րդ .—*Խորհրդային և կապիտալիստական հասարակա-
կարգերը .* («Յերկամյա ծրագիր» էջ 103-107) :

Զրույց 21-րդ .—*Լեհաստան* (նույն տեղում էջ՝ 177-183) :

Զրույց 22-րդ .—*Ռումինիա* (նույն տեղում էջ 183-186) :

Զրույց 23-րդ .—*Մերձբայթեան պետութիւններ* (նույն տեղում
187-190) :

ԶՐՈՒՅՑ 24-ԲԴ

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԲԱՆԱԿՈՒՄ

ԶՐՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Բացառել կարմիր բանակայիններին, վեր ԽՍՀՄ վոչ միայն
մեր յերկրի բանվորների և դուշադիների սոցիալիստական հա-
րենիքն է, այլ և ամբողջ աշխարհի աշխատավորների և հարս-
տահարած մասսաների հայրենիքն է, վեր ամբողջ աշխարհի
աշխատավորները պաշտպան են կանգնած առաջին սոցիալիստա-
կան հանրապետութեանը :

Զրույցի պլանը

1. ԽՍՀՄ—առաջին յերկիրն է, վերտեղ հաղթեցին բանվոր-
ներն ու դուշադիները :

2. ԽՍՀՄ—պատվարն է համաշխարհային հեղափոխութեան :

3. Ամբողջ աշխարհի աշխատավորները ԽՍՀՄ պաշտպան են
կանգնած :

1. Ամբողջ աշխարհի բանվորներն ու դուշադիները պայքա-
րում են իրենց շահագործողների և հարստահարողների—կապի-
տալիստների դեմ : Այդ պայքարի խնդիրն է՝ խորտակել կապի-

տալիստներին և անցնել նոր սոցիալիստական հասարակութեան կառուցմանը: ԽՍՀՄ բանվորների և գյուղացիների Հոկտեմբերյան հաղթանակը հանդիսացավ համաշխարհային բուրժուազիայի մարտնակատի առաջին նեղփլածը: Ռուսական ինքնակալութեան անկումով և կալվածատերերի ու կապիտալիստների վոլճինչացումով Ռուսաստանում վոլճինչացավ համաշխարհային ուսակցիայի տմենահղոր պարիսպներից մեկը: Շնորհիվ յերկրագնդի 1 յոթերորդ մասում կատարված Հոկտեմբերյան հեղափոխութեան, վոլճինչացավ բուրժուազիայի իշխանութիւնը և սկսվեց սոցիալիզմի կառուցումը:

2. Ռուսաստանում բանվորների և գյուղացիների Հոկտեմբերին ձեռք բերած հաղթանակը, քաղաքացիական պատերազմի հաղթանակը և հաջորդ սոցիալիստական շինարարութիւնը—համաշխարհային հեղափոխութեան ուժգին ազդակներն են հանդիսանում: Հաղթանակը Ռուսաստանում ազդեցեց, վոր հնարավոր է և հաղթանակ տանել կալվածատերերի և կապիտալիստների վրա, վոր հնարավոր է բանվորների և գյուղացիների ուժերով կառուցել սոցիալիստական հասարակութիւն: ԽՍՀՄ փորձը նույնպէս ցույց տվեց, վոր իշխանութիւնը բանվորների ձեռքը անցնելուց հետո միայն հնարավոր է խորտակել ազգային ճնշումը և ձեռք բերել բոլոր ժողովուրդների աշխատավորների յեղբայրակցութիւնը: Հոկտեմբերյան հեղափոխութիւնը ճնշողների դեմ պայքարի փորձի անապառ աղբյուր է հանդիսանում: Խորհրդային Միութիւնը ցույց տվեց ամբողջ աշխարհին, վոր նա պայքարում է հարստահարութեան և զաղութային ստրկացման դեմ՝ վոլճինչացնելով անահալմաստ պայմանադրերը կապված թույլ պետութիւնների հետ: Հոկտեմբերյան հեղափոխութիւնը ցույց տվեց նույնիսկ ամենահետամնաց ժողովուրդներին պայքարի ուղին: Ամբողջ աշխարհի աշխատավորները մեծ հետաքրքրութեամբ հետևում են Խորհրդային Միութեան մեջ ծավալվող սոցիալիզմի կառուցմանը, առանձնապէս պատգամավորներ են ուղարկում մեր հաջողութիւնները ուսումնասիրելու համար: Մեր հեղափոխութեան փորձը ցույց տվեց ամբողջ աշխարհի աշխատավորներին, վոր միայն բանվորների ու գյուղացիների սերտ դաշինքը, բանվոր դասակարգի ղեկավարութեամբ, կարող է հաղթանակ տալ: Վոր միայն դասակարգային համառ պայքարով ղեկավար պայտամբութեամբ կարող ենք հաղթել կապիտալիստներին: Վոր կոմունիստները միակ կուսակ-

ցութեանն են, վոր բանավորներին ու գյուղացիներին դեպի հաղթանակ են տանում: Հսկումբերեյան հեղափոխութեանից հետո, բոլոր յերկրներում հեղափոխական շարժումը քանի դնում ծափալվում է, ընդվորում բանավորական շարժման հետ յայնանում է եւ՝ սոցիալին—ապստոսգրական շարժումը Արեւելքում է գաղութային յերկրներում: Հանձնու Սորհրդային Միութեան ամբողջ աշխարհի աշխատավորները տեսնում են իրենց սոսաջին սոցիալիստական հայրենիքը, վորն իրոք պաշտպան է կանդնած բանավորների ու գյուղացիների շահերին: Վերքան ամէլի յե ամբանում Սորհրդային Միութեանը, այնքան ամէլի պնդանում է համաշխարհային հեղափոխութեան հիմքը, վորովհետեւ մեր սոցիալիստական շինարարութեանը—ամենալավ միջոցն է միլիոնավոր աշխատավորներին հեղափոխականացնելու եւ իմպերիալիզմի հղորութեանը խորտակելու համար:

3. Հսկումբերեյան հեղափոխութեան հենց սկզբից ամբողջ աշխարհի աշխատավորները պահապան կանգնեցին Հսկումբերի նըվաճումներին: Քաղաքացիական պատերազմի տարիներին կապիտալիստական յերկրների բանավորները պայքարեցին ՍՍՀՄ-ին հայտարարած ինտերվենցիայի դեմ, հրաժարվելով արկեր, ռազմական հանդերձանք բեռնել, վորոնք ուղարկվում էին մեր թշնամիներին: Սովի տարիներին աշխատավորները ոգնութուն կազմակերպեցին Սորհրդային Միութեան սովյալներին, նվիրատվութեաններ հովաքելով, մեղ հաց, հազուստ ուղարկելով, իրենց մոտ վերցնելով սովյալ յերկրաներին, առանձին ջոկատներով աշխատանքային ոգնութուն ցույց տալով Մերձվորեյան գյուղացիներին: Սաղաղ ընդմիջումի տարիներին աշխատավորները մերկացնում են ՍՍՀՄ դեմ պատրաստվող ինտերվենցիան, ակտիվ պայքար են մղում նրանց դեմ, ովքեր ցանկանում էին եւ ցանկանում են զինված ձեռքով խեղդել Սորհրդային Միութեանը: Սորհրդային Միութեան համար պատերազմի վտանգի աճման հետ ամբողջ աշխարհի աշխատավորները նոր ուժերով պայքարում են կապիտալիստների դեմ, վորոնք ձգտում են խորտակել առաջին սոցիալիստական պետութեանը: Ամբողջ աշխարհի բանավորները, գյուղացիներն ու ճնշված ազգութեանները նույնպէս հակայական ոգնութուն են ցույց տալիս ՍՍՀՄ-ին՝ իրենց ամենուրեւ պայքարով կապիտալիստների եւ կապիտալիստական ճնշման դեմ: Աշխատավորները պայքարելով կապիտալիստների դեմ, դործադուլներ կազմակերպելով, ապստամբութեաններ ծագեցնելով եւ այլն, թու-

լացնում են կապիտալիստների հղորությունը և նրանց հետու յեն պահում Սորհրդային Միության դեմ պայքարից։ Հեղափոխական շարժումը կապիտալիստական յերկների ներսում հաճախ յետ են պահում կապիտալիստներին ՍՍՀՄ վրա հարձակվելուց, վորովհետև նրանք չեն հալատում իրենց թիկունքի դրության կայունությանը։ Կապիտալիստական թիկունքի անբարենույս դրությունը նշանավոր չափով թուլացնում և կապիտալիստների ռազմական պատրաստությունը։ զրա համար ել նրանք կատաղությամբ լրջոված աշխատում են իր բնում խեղդել հեղափոխական շարժումը և ապահովել իրենց թիկունքը ՍՍՀՄ դեմ պատերազմի դեպքում։

Կապիտալիստների հետ ունենալիք ապագա պատերազմում ետրիդային Միության աշխատավորները մենակ չեն լինի։ Որանց հետ միասին կապիտալիստների դեմ պայքարի դուրս կգան ամբողջ աշխարհի աշխատավորները։ Բուրժուազիան և նրա արքայականները ամբողջ ուժով արգելքներ են հարուցում ՍՍՀՄ ողնության դեմ և ապագա պատերազմում ել ձեռք կանեն բոլոր միջոցները, վորպեսզի թույլ չտան այդ ողնությունը։ Համենայն դեպս ամբողջ աշխարհի աշխատավորները միջոցներ կգտեն միասնական ճակատ կազմելու Սորհրդային Միության աշխատավորների և Կարմիր բանակի հետ, վորպեսզի միացյալ ուժերով պաշտպանեն աշխատանքի առաջին հանրապետությունը աշխարհում—ՍՍՀՄ—ին։

Ծանոթություն.—Այս դրույցը պետք և կառուցել բուրժուազիայի՝ բանվոր դասակարգի և իրենց յերկրների աշխատավորների վրա հարձակվելու կոնկրետ փաստերի վրա, մասնավորապես աշխատավորների միջազգային համերաշխության փաստերի վրա և մանավանդ Արևմուտքի բանվորական մասսաների ու Արևելքի ճնշված ժողովուրդների և ՍՍՀՄ միջև իդեական ու կազմակերպչական կապի ամրացման կոնկրետ փաստերի վրա։ Բոլոր ցույց տրված փաստերն անհրաժեշտ և վերցնել վերջին լրագրային հազորագրություններից։

ԶՐՈՒՅՑ 25-ՐԴ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ

Զրույցի Ուսուցիչ

Բացատրել կարմիր բանակայիններին համաշխարհային հեղափոխական շարժման դերն ու նշանակությունը, ինչպես միջազգային պրոլետարական հեղափոխության պատրաստության գոր-

ծում, այնպես եւ ԽՍՀՄ նոր ինտերվենցիայից պաշտպանելու գործում. ապացուցել, վոր Կոմինտերնը հանդիսանում ե համաշխարհային հեղափոխական շարժման առաջնորդը :

Զրույցի պլանը

1. Ամբողջ աշխարհի բանվորները կապիտալիստների դեմ մրդած պայքարում :

2. Ազգային-ազատագրական շարժումը գաղութներում :

3. Բանվոր դասակարգի, Արեւելքի ճնշված ժողովուրդների և գաղութային յերկրների միասնական պայքարը կապաճովի համաշխարհային հեղափոխության հաղթանակը :

4. Կոմինտերնը—համաշխարհային հեղափոխության շարժման առաջնորդն է :

1. Կապիտալիստական յերկրներում կապիտալիստները ճնշում են բանվորներին : Բանվորները իրենց նյութական գոյության լավացման համար (աշխատավարձը բարձրացնելու, բանվորական որը կարճացնելու համար), համառ պայքար են մղում իրենց ճնշող կապիտալիստների դեմ՝ քաղաքական իրավունքներ ձեռք բերելու և կապիտալիստների լուծը խորտակելու համար : Բուրժուազիան այդ պայքարում գործում ե ինչպես ղինված ուժով (գորք, վստականություն, Փաշխտական կադմակերպություններ), այնպես եւ պրովակացիայի, խարերայության, բանվոր դասակարգի գալանան առաջնորդներին կաշառելու միջոցով : Բուրժուազիայի ծառայության մեջ ե գտնվում ընդդեմ բանվոր դասակարգի ամբողջ պետական ապարատը և ամբողջ կապիտալիստական մամուլը : Բացառիկ դեր ե խաղում սոցիալ-դեմոկրատիան, վորը բանվորական շարքերում հանդես ե գալիս վորպես բուրժուազիայի ագենտուրան ամեն քայլափոխում գալանանելով բանվորների շահերին, ամեն կերպ ոգնելով բուրժուազիային՝ բանվոր դասակարգի դեմ մրդած պայքարում : Բանվոր դասակարգի հեղափոխական և աղնիվ ղեկավարների դեմ բուրժուազիան կիրառում ե բռնի միջոցներ (բանտեր, տաժանակիր աշխատանքներ, մահվան պատիժ) : Բուրժուազիայի դեմ պայքարում բանվոր դասակարգը կիրառում ե գործադուլներ, ղինված ապստամբություններ, դուրս գալով կադմակերպված և միասնական ուժով : Բանվոր դասակարգի բուրժուազիայի դեմ պայքարը արգեն տասնյակ տարիներ և շարունակվում ե. պայքարն առանձնապես սուր ձև ստացավ իմպերիալիստական պատերազմից հետո, յերբ խաբված բանվորական մասսա-

ները տեսան պատերազմի հետեանքները—միլիոններով սպանվածներ ու հաշմանդամներ, աշխատավոր մասսաների ել՝ ավելի ճշնշում ու քայքայում, դործադրկության աճում և այլն։ Սուր պայքարի ալիքը ցնցեց կապիտալիստական աշխարհի հիմքերը, այդ ալիքը հաղթանակ բերեց մեր յերկրում աշխատավորների համար։ Սակայն մի շարք այլ յերկրներում (Գերմանիա, Ավստրիա, Վենգերիա) բանվորները պարտութիւն կրեցին։ Շնորհիվ Սոցիալ-դեմոկրատիայի դավաճանական դերին, բուրժուազիային հաջողվեց հաղթանակով դուրս գալ հեղափոխական կռիւներից։ Համենայն դեպս, պայքարը վոչ միայն թուլանում և, այլ մի քանի յերկրներում ուժեղանում և։ Վերջին տարիներում բանվոր դասակարգը կապիտալիստների դեմ մղած հերոսական պայքարում մի շարք նոր որինակներ տվեց (ընդհանուր դործադուլ Անգլիայում, ածխահատների դործադուլը, ապստամբութիւն Վիեննայում, Լոդէի, Ռուրի և ուրիշ դործադուլներ)։ Համաշխարհային բանվորական շարժման պայքարի հսկայական նշանակութիւնն այն և, վոր այդ պայքարի մեջ են ներգրավվում Արեւելքի հեղափոխական բանվորների նոր կազմեր (Չինաստան, Ճափոնիա, Հնդկաստան և մյուս յերկրներ)։ Համաշխարհային բանվորական շարժման աճման հետ միաժամանակ ուժեղանում և և բուրժուազիայի հարձակումը բանվոր դասակարգի վրա։ Արհմիութիւնների վերաբերյալ որենքը Անգլիայում, մի շարք յերկրներում (Լեհաստան, Գերմանիա և այլն) ութ ժամյա բանվորական որվա փաստորեն վերացումը, արհմիութիւնների ցրումը Իտալիայում (թուլյատրքված են միայն Փաշիստական արհկազմակերպութիւններ, պարտաւոր արբիտրաժ, լսկառւտներ մացնելը, և այլն), Չինաստանից մինչև Ամերիկա բանվոր դասակարգի նկատմամբ քաղաքական հալածանքի ուժեղացումը—այս բոլորը բանվոր դասակարգի վրա հարձակման ընդհանուր շղթայի ողակներն են։ Վերջին տարիներում տեղի ունեցան ամբողջ մի շարք հակամարտեր բանվոր դասակարգի կողմից, վորոնք ապացուցեցին, վոր բանվոր դասակարգն սկսում և իր ուժերը հաւաքել կարգի բերել իրեն հասցրած պարտութիւններից հետո։ Բանվոր դասակարգը բուրժուազիայի դեմ մղած պայքարում շատ անգամ և պարտութիւն կրել, սակայն յուրաքանչյուր պարտութիւնից հետո նա փորձ և կուտակում ապագա պայքարի համար։

2. Կապիտալիստների ուժի գլխավոր աղբյուրներից մեկը դաւութներն են։ Գաղութները—դրանք կապիտալիստների կազմից

րոնի կերպով դրամոված յերկրներն են : Գաղութներէց ոգուտ ըստանալու համար կապիտալիստները անխղճօրէն շահագործում են զգաղութային յերկրներէ աշխատաւորներին : Աշխատաւորները զաղութներում գտնուիւմ են կիսաստրկական դրութեան մէջ : Ագքատութեանը զաղութներում հասել է անհավատալի չափերի, աշխատաւորներէ կենսական մակարդակը չափազանց ցածր է :

Գաղութներէ ճնշված ժողովուրդներէ աշխատաւորները շատ անգամ են ապստամբել իրենց ճնշողներէ դեմ՝ մղելով համառ զինված պայքար : Իմպերիալիստները ամենասոսկալի բռնութեամբ ճնշում են ապստամբութեանները՝ ոգտագործելով տեխնիկայի նորագույն բոլոր նվաճումները (զապեր, տէրոպլաններ, գրեկնոսուներ և ուրիշները) ընդդէմ թույլ զինված ապստամբներէ, ժոհնացնելով խաղաղ բնակիչներէ ամբողջ գյուղեր : Գաղութներէ և կախյալ յերկրներէ աշխատաւորներէ դեմ մղած պայքարում կապիտալիստները ոգտագործում են տեղացի վարձկան զենեքաւորներն, կարվածատերերն, իշխաններն :

Վերջին տարիներում այդ պայքարն առանձնապէս համառ բռնութեամբ և կրում (Սիրիա, Մարոկկո, Չինաստան, Յեզկիստոս, Յըրանսական Կոնգոն Աֆրիկայում և մյուսները) : Կիսաազաղութային յերկրներէ մի քանիօրն (Տաճկաստան, Պարսկաստան) հաջողից ձեռք բերել անկախութեան : Կապիտալիստներն Արևելքի և զաղութային յերկրներէ հարստահարված մասսաներէ պայքարը թուլացնելու համար, աշխատում են նրանց մէջ փոխադարձ կոխի և յերկպառակութեան սերմանել՝ ազգային և կրոնական հոգի վրա : Արևելքի և զաղութային յերկրներէ ճնշվածների պայքարը կապիտալիստներէ համար հատկապէս վտանգաւոր և դառնում հենց նրա համար, վոր ճնշված մասսաները բողոքականապէս աճել են և ունեն հեղափոխական զեկաւար՝ հանձինս բանվոր դասակարգի աճման զաղութային յերկրներում (ի հաշիվ պատերազմի տարիներին աճած արդշուշարերութեան) : Այդ պայքարը սասանում և կապիտալիզմի հզորութեանը և քանդում և կապիտալիստական շահագործման գլխաւոր հիմքերից մեկը :

3. Ազգային — ազատագրական շարժման խնդիրները զուգադիպում են բանվոր դասակարգի պայքարի խնդիրներէ հետ, բանվոր դասակարգի, վորը պայքարում և կապիտալիստական լուծը թրթալիւնելու համար : Կապիտալիստական սկտուլթուսներէ պայքարող բանվոր դասակարգը՝ հանձինս իր հեղափոխական

կարժաեկըպությունները, աշխատում և դադութները աղագային-
ադատադրական շարժման հետ մեկ միասնական ճակատ կազմել:
Ֆրանսուական բանվորները համառ պայքար ելին մղում պատե-
րազմի ժամանակ Մարտիկոյում իրենց կառավարութեան դեմ,
անգլիական և մյուս յերկրների պրոլետարները պայքար են մը-
ղում ինտերվենցիայի դեմ Զինաստանում: Բանվոր դասակարգի
և դադութների ժողովուրդների ճնշվածների աշխարհի միատեղ
պայքարը կապիտալիստների դեմ, կապիտալիստների համար ա-
մենամեծ վտանգն և ներկայացնում, վորովհետև այդ միատեղ
պայքարը հեշտացնում և պայքարողների հաղթանակը: Բուժուա-
դիան ամեն տեսակ միջոցներով պայքարում և աշխարհի միու-
թեան դեմ՝ ինչպես բռնի միջոցներով և իր յերկրի համաձայնո-
ղական առաջնորդներին կաշառելու միջոցով, այնպես ել սուտ
տեղեկությունների միջոցով՝ նկարագրելով պայքարողներին
վորպես ցիվիլիզացիայի և կուլտուրայի դեմ ապստամբների:
Բանվոր դասակարգի ու դադութների ճնշվածների միասնական
ճակատը դեմ մղվող պայքարում բուժուադիային ամենակատիվ
ողնություն ցույց տվողները համաձայնողական սոցիալ-դեմոկ-
րատական կուսակցություններն են:

4. Հեղափոխական պայքարի ընթացքում ամբողջ աշխարհի
աշխատավորներն ել ալեկի յեն համողվում, վոր միակ հեղափո-
խական կուսակցությունը, բուժուադիայի դեմ պայքարն իր
վախճանին հասցնողը, դա կոմունիստների կուսակցությունն և
և դրա համար նրան են հանձնում իրենց պայքարի ղեկավարու-
թյունը: Կապիտալիստական յերկրներում, ինչպես և մեղանում՝
Ռուսաստանում կոմունիստական կուսակցությունները բանվոր
դասակարգի շարքերից են յեկել և կաղմված են անպայման բան-
վոր դասակարգի գործին նվիրված մարդկանցից: Կոմունիստա-
կան կուսակցությունները հսկայական աշխատամք են քափում
բանվորներին ու գյուղացիներին կազմակերպելու գործում՝ կա-
պիտալիստների տիրապետութեանը վնջնացնելու պայքարի
համար, գլխավորում են բանվոր դասակարգի բոլոր հեղափո-
խական յեղափոխությունները և Արևելի մնշված ժողովուրդների հեղա-
փախական պայքարը: Բոլոր յերկրների կոմունիստական կու-
սակցությունները համախմբվել են մեկ միասնական կոմունիս-
տական ինտերնացիոնալի մեջ (յերրորդ)՝ հեղափոխական շարժ-
ման միասնական ղեկավարություն ստեղծելու համար, միջադ-
գային մասշտաբով բանվոր դասակարգի պայքարը միասնելու,

միջազգային բանվորական շարժման զանազան ջոկատների սլայ-
ֆարի փորձը փոխանակելու համար: Կոմունիստական Ինտերնա-
ցիոնալն իր առաջ հիմնական խնդիր է դրել համախմբել աշխա-
տավոր և հարստահարված մասսաներին դասակարգային պայքա-
րի հողի վրա՝ կապիտալը վաճնչացնելու համար: Կոմինտերնի
ղեկավարությամբ աշխատում է Յերիտասարդության Կոմունիս-
տական Ինտերնացիոնալը (ԿԻՄ), վորն իր շարքերի մեջ է հա-
մախմբում յերիտասարդության հեղափոխական կոմունիստական
կազմակերպությունները, վորոնք դաստիարակվում և կազմա-
կերպվում են բանվորների ու կեղեքված մասսաների հետ միա-
սին պայքար մղելու՝ բուրժուազիային տապալելու համար:

*Կոմինտերնը, համախմբելով կոմունիստական կուսակցու-
թյունների պրոլետարիատի առաջավոր ջոկատների պայքարը,
չէր կարող առաջ չբերել բուրժուազիայի կատաղի ատելությու-
նը: Բոլոր յերկրների բուրժուազիան պայքարում է կոմունիստա-
կան կուսակցությունների դեմ, հարկադրելով նրանց անցնելու
ընդհատակյա դորժուենյության, իր հաշիվները մաքրելով կոմ-
կուսակցությունների ակտիվ առաջնորդների հետ՝ մահապատիժ-
ներից, բանտերից և տաժանակիր աշխատանքներից: Ձնայած
կոմունիստների դեմ ձևաքառած բռնի միջոցներին, կոմկու-
սակցությունների և Կոմինտերնի աղղկցությունն աճում է,
բոլոր յերկրների բանվորներն ու կեղեքված մասսաները բուր-
ժուազիայի դեմ մղած պայքարում, ի դիմաց իրենց իսկական
հեղափոխական առաջնորդի, ընդունում են Կոմինտերնին, վորպես
համաշխարհային հեղափոխության համար պայքարողի. սոցիալ-
դեմոկրատների աղղկցությունը հեղուհեղ ընկնում է, վորով-
հետև քանի դեռում ավելի տեսանելի յե դառնում սոցիալ-դեմոկ-
րատական կուսակցությունների ստոր դավաճանությունը: Վեր-
ջին ժամանակներս մի շարք ընտրություններում (Գերմանիա,
Ֆրանսիա, Լեհաստան) բանվոր դասակարգը ցուցահանեց իր
նվիրվածությունը կոմկուսակցությանը, իրենց ձայները տալով
կոմունիստներին: Այս մասին խոսում են և ուրիշ փաստեր
(կոմկուսակցության աղղկցության ուժեղացումն արհմիություն-
ներում):*

5. Կոմունիստական Ինտերնացիոնալը պաշտպան կանգնելով
համաշխարհային հեղափոխության շահերին, ակտիվ պայքար և
տանում համաշխարհային հեղափոխության պատվարի—ԽՍՀՄ—ի
ամրացման ու պահպանության նամար: Բուրժուական յերկր-

ներում, ամբողջութեամբ կոմունիստական կուսակցութեանը հենց զոյգութեան փաստն է, վոր դսպում է կապիտալիստներին դուրս գալու: ԽՍՀ Միութեան դեմ՝ այդ կոմկուսակցութեանն են, վոր խոշոր քաղաքական ազդեցութեան ունեն բանվորական մասսաների վրա և ակտիվ հեղափոխական պայքար են տանում: Կոմիստներն իր կուսակցութեանը միջոցով և բանվորական մասսաների մեջ նրանց ազդեցութեան միջոցով ակտիվ պայքար և մղում պատերազմի վտանգի դեմ՝ մերկացնելով համաշխարհային բուրժուազիայի բոլոր դիտավորութեանները, ուղղված ԽՍՀՄ դեմ: Կոմիստները կազմակերպում և բոլոր յերկրների բանվորական մասսաներին և Արեւելքի ու գաղութային յերկրների կեղեքված ժողովուրդներին՝ պաշտպանելու համար աշխարհում առաջին սոցիալիստական խորհրդային յերկրը և ակտիվ պայքար մղելու Խորհրդային Միութեան վրա հարձակման դեմ: Կոմիստներն հետ միասին և նրա ղեկավարութեամբ իր աշխատանքն և տանում ԿիՄ-ը: ԿիՄ-ը կազմակերպում և բանվոր յերիտասարդութեանը՝ հասակավոր բանվորների հետ միատեղ պրոլետարական ղեկատուութեան համար պայքար մղելու: ԿիՄ-ն ակտիվ պայքար և մղում ԽՍՀՄ համար պատերազմի վտանգի դեմ: Կոմիստները կապիտալիստների ԽՍՀՄ դեմ ապագա մղելիք պայքարում մեր դեմ ուղղած պատերազմը յուրաքանչյուր իմպերիալիստական պետութեան կապիտալիստների դեմ պատերազմի վերածելու կազմակերպողը կլինի:

Կոմիստներն VI կոնգրեսը առանձին ուշադրութեամբ դրողովեց պատերազմի և պատերազմական վտանգի հարցերով: Կոնգրեսն ընդգծեց, վոր մի կողմից՝ վերջին ժամանակներս առանձին իմպերիալիստական խմբավորումների միջև հասունանում են ամբողջ մի շարք սուր հակասութեաններ (և առաջին հերթին այդ հակասութեանները տեղի ունեն անգլիական և ամերիկական իմպերիալիստների միջև) և մյուս կողմից կապիտալիստական աշխարհը հարձակում և պատրաստում համաշխարհային կոմունիստական շարժման կենտրոն—ԽՍՀՄ-ի վրա և դրա մեջ և վորոնում, կապիտալիստական սիստեմը քայքայող անտեսական և քաղաքական հակասութեանների ցանցից դուրս գալու, իր փրկութեանը: Կոմիստները պատերազմի վտանգի դեմ պայքար մղելու և իմպերիալիզմի հարձակումից ԽՍՀՄ պաշտպանելու համար նեց զործողութեանների կոնկրետ սղան: VI կոնգրեսում հալաքված կոմունիստական կուսակցութեանները վորոշեցին.

ա) Ամենուրեք և անզաղար պրոպագանդ մղել ԽՍՀՄ-ի հետ պատերազմի դեմ՝ մերկացնելով այդ պատերազմի թախնչկան բնույթը, ցույց տալով մասսաներին իմպերիալիստների գինդերու փաստերը, վորոնք առաջին հերթին ուղղված են ԽՍՀՄ դեմ։

բ) Հրապարակել բոլոր տեսակի գաղտնի գաշնադրերը, ուղղված ԽՍՀՄ դեմ։

գ) Մերկացնել ամեն տեսակ ճառախոսությունները գինաթափման մասին, բուրժուադիայի և նրա արբանյակ սոց.—դեմ. կողմից, վորոնք խաբուրւմ են բանվորական մասսաներին, և ցույց տալ նրանց իսկական նշանակությունը։

դ) Յուրջ տալ բանվորական մասսային, վոր ԽՍՀՄ դեմ պաշարն բնդունում և զանազան ձևեր (անտեսական չրջափակում, հակահեղափոխական յերււթների կաղմակերպություն ԽՍՀՄ դեմ—Շախտիի դործը)։

ե) Ազխտացիա մղել ընդհանուր դործադուլի համար պատերազմի դեպքում։

զ) կաղմակերպել փողոցային ցույցեր պատերազմի դեմ, կանանց և յերկխաների ցույցեր մեկնող զնացքների ճանապարհների վրա, հաշմանդամների ցույցեր և այլն։

է) Ուժեղացնել իր աշխատանքը արհմիությունների մեջ, մանավանդ մեռազապործների, ածխահանների, փոխադրողների, քիմիկների չրջանում, այսինքն՝ այն բանվորների խմբակների չրջանում, վորոնք աշխատում են այնպիսի արդյունաբերության մեջ, վորը սպասարկում և պատերազմի կարիքներին։

ը) Մտեղծել աջակցության կոմիտեներ լոգունդ ունենալով պաշար ինտերվենցիայի դեմ։

թ) Ընդդեմ Ֆաշիստական ջոկատների ստեղծել իր կաղմակերպությունները կարմիր ճակատայինների միության որինակով։

ժ) Ուժեղացնել աշխատանքը բանակում։

ժա) Աշխատել ԽՍՀՄ դեմ իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի՝ դործադուլների, ապստամբությունների միջոցով։

ժբ) Ազխտացիա տանել, վորպեսզի գինվորները անցնեն կարմիր բանակի կողմը և այլն։

Վորջան ալեկի աճի համաշխարհային կոմունիստական շարժման ուժղնությունը, վորջան ալեկի բանվորների և ճընչ-

վածները մասսաները կկանգնեն Կոմիտեներն զբոլի տակ, այնքան ավելի կթուլանա համաշխարհային կապիտալիզմը, այնքան ավելի խիստ կլինի կապիտալիզմի ատելութունը դեպի խՍՀՄ : Վորքան չուտ Կոմիտեներն հաջողեցնի ձեռք բերել հաղթություն կապիտալիստների դեմ, այնքան ավելի չուտ կվերանա մեր դեմ յեղած զինված ինտերվենցիայի վտանգը և այնքան չուտ կիրա-
կանանա մեր յերկրում և ամբողջ աշխարհում սոցիալիզմի հաղ-
թանակի հնարավորութունը :

Կոմիտեներն և ԿիՄ-ը—խաղաղ սոցիալիստական շինարարութեան պատվարներն են խՍՀՄ-ում, մեր յերկրի աշխատա-
վորների ընկերն ու դաշնակիցներն են, համաշխարհային հեղա-
փոխական առաջնորդն ու ղեկավարներն են :

ԶՐՈՒՅՑ 26-ՐԴ

ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Զրույցի նպատակը

Բացատրել կարմիր բանակայիններին, վոր նոր պատերազմ-
ների վտանգը պահանջում և խորհրդ. Միութեան պաշտպանու-
թեան համար ուժեղ պատրաստութիւն, առաջին հերթին—պա-
հանջում և ամրացնել Կարմիր բանակի մարտունակութիւնը,
վոր ժամանակակից պատերազմը իր տեխնիկական միջոցներով
պահանջում և ամբողջ բնակչութեան պատերազմին ընդհանուր
մասնակցութիւնն ու յերկրի բոլոր տնտեսական միջոցների մո-
բիլիզացիան և վոր այս հսկայական աշխատանքը մի բանակ
գլուխ բերել չի կարող—և դրա համար անհրաժեշտ և, վոր
յերկրի պաշտպանութեան համար պատրաստութեանը մասնակե-
ցեն բոլոր բանվորներն ու գյուղացիները, ամբողջ խորհրդային
հասարակայնութիւնը (Պաշր-Ավիաբիւ) : Ապացուցել, վոր յու-
րաքանչյուր կարմիր բանակային—փոփոխիկի խնդիրն և՛ ամեն
կերպ բարձրացնելով իր ռազմական պատրաստութիւնը, դառ-
նա Պաշր-Ավիաբիւի ակտիւ անդամը, ներդրավի բանվորների
և գյուղացիների լայն մասսաներին Միութեան պաշտպանունա-
կութեան ամրացման գործի մեջ :

Զրույցի պլանը

1. Մեր սոցիալիստական շինարարութեանը սպառնացող նոր
պատերազմների վտանգի առկայութիւնը պահանջում և ուժե-
ղացնել մեր ուղադրութիւնը պաշտպանութեան հարցերի վրա :

2. Կարմիր բանակի շարքերի ամրացման նշանակութիւնը վորպէս Միութեան պաշտպանութեան հիմք:

3. Յերկրի ինդուստրացումը—Կարմիր բանակի տեխնիկական հզօրութեան հիմքն է:

4. Ապագա պատերազմների տառնձնահատկութիւնը և ամբողջ յերկրի բնակչութեան ռազմական դործի ընդհանուր ուսուցման խնդիրը:

5. Պարզ—Այլաբանի դերը յերկրի պաշտպանութեան համար պատրաստութեան մեջ:

6. Կարմիր բանակային—փոփոխիկի խնդիրը յերկրի պաշտպանութեան համար պատրաստութեան մեջ:

Մեր սոցիալիստական շինարարութեանը սպառնացող նոր պատերազմների վտանգը հարկադրում է Սորհրդային Միութեանը եւ ամէկի ուշադրութեան դարձնել պաշտպանութեան հարցերի վրա: Բարդացող միջպոպային դրութիւնը ստիպում է առանձնապէս սրել ուշադրութեանը բոլոր յերկրներում աշխատանքի վրա, վորը կապված է յերկրի պաշտպանութեան հետ:

Սորհրդային Միութեան պաշտպանութեան հիմնական ուժը Կարմիր բանակն է, վորը ամեն բոլե սկտք է պատրաստ լինի հակահարված տալ թշնամու հարձակմանը: Հետագա պատերազմի վարույթը պահանջում է դործի մեջ քաշել բազմամիլիոն մարտիկների, համենայն դեպս, առաջին շրջանում, պատերազմն իր ամբողջ ծանրութեամբ ընկնելու յե ներկա բանակի վրա, վորի ամբութիւնից ու մարտական հզօրութիւնից նշանավոր չափով կախված կլինի պատերազմի հետագա ընթացքը: Կարմիր բանակի հզօրութեան ամբութեան դործում առանձնակի տեղ են դրավում յերկրային զորամասերը, վորոնց պատրաստութիւնը պետք է կազրային զորամասերի հետ հաւասար ընթանա: Կարմիր բանակային—փոփոխիկի, ինչպէս և Կարմիր բանակի բոլոր մարտիկների խնդիրն է՝ հանդէս բերել ամբողջ ուշադրութիւնն ու ուժը՝ ուսումնասիրելու ռազմական դործը, ամրացնելու կարգապահութիւնը և բարձրացնելու իր քաղաքական դիտակցութիւնը: Յերկրային զորամասերում հաւաքների կարճատեւ ժամկետը պահանջում է հայտարերել ամէկի մեծ լարվածութիւն ուսուցման մեջ:

Ապագա պատերազմի վարույթը կապված է տեխնիկական զորքերի հսկայական դերի հետ, և տեխնիկական միջոցների նյութ-

թական մասի ու դուղատնտեսական մթերքների հետ: Մեր հասկանալի հակառակորդները, պատերազմի պատրաստվելով, մեթերում են խոշոր քանակով ամեն տեսակ տեխնիկական միջոցներ: Վորպեսպի կարմիր բանակը հակառակորդի տեխնիկային հակադրի իր տեխնիկան, անհրաժեշտ է ամեն կերպ ամրացնել մեր ռազմական արդյունաբերութունը: Ռազմական արդյունաբերութունը պատերազմի դեպքում, թեկուզ վորքան լավ կազմակերպված լինի և լայնորեն զարգացած, անկարող է ինքը հարկավոր չափով տեխնիկական միջոցներ մատակարարել բանակին, վորովհետև պատերազմը կպահանջի այդ միջոցների հսկայական թվով ծախսում:

Բանակի պատերազմի ժամանակ տեխնիկական միջոցներով և մթերքներով մատակարարումը լիակատար կերպով ապահովել կարող են միայն ամբողջ յերկրի լայնորեն զարգացած արդյունաբերութունը և զարգացած դուղատնտեսութունը՝ կառուցված կոլլեկտիվ սկզբունքների և նոր տեխնիկական հիմունքների վրա (մեքենայացում, տրակտորացում): Կուսակցութան յերկրի ինդուստրացման վերաբերյալ բռնած դիժը հաստատուն հիմք է դնում Խորհրդային Միության պաշտպանութան համար: Յերկրի ինդուստրացման քաղաքականության անհեղ կիրառումը, նոր ֆարրիկանների ու գործարանների կառուցումը, հաղորդակցության ճանապարհների ընդարձակումը, գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումը կապահովեն կարմիր բանակի հաղթանակը ապագա պատերազմում:

Ապագա պատերազմում տեխնիկական միջոցների լայն կիրառումը (ավիացիա, քիմիա) անխուսափելիորեն կներգրավի բազմաթիւն մասսաներին պատերազմի վարույթի մեջ: Ճակատի ու թիկունքի միջև տարբերութունը նշանավոր չափով կնվազի, մի կողմից՝ պատերազմը չի կարող շարունակվել առանց ռազմական նյութեր պատրաստելու աշխատանքի, առանց ճակատի կանոնավոր հայթայթման, մյուս կողմից՝ ժամանակակից ավիացիան և կովի քիմիական միջոցները հնարավորութուն են տալիս «ճակատի» գլխավերևով քարուքանդ անել հակառակորդի մատակարարման բաղաները, նրա գործարաններն ու քաղաքները: Այսպիսով համարյա ամբողջ բնակչութունը պետք է պատրաստված լինի մասնակցելու ապագա պատերազմում: Ապագա պատերազմում կարմիր բանակը հաղթող դուրս կգա միայն այն պայմանով, յեթե Միության պաշտպանության մեջ պարտադիր և յերկարատե

մասնակցութեան ունենալ ամբողջ բնակչութեանը վոչ միայն պատերազմական, այլ և խաղաղ ժամանակ: Յերկրի պաշտպանութեան վերաբերյալ աշխատախորհրի պարտականութեաննր կատարելու պարտաւորութեանը պետք և անցկացնել և՛ խաղաղ ժամանակ:

Իհարկե, միայն բանակի ապարատով հնարավոր չէ անցկացնել այդքան հսկայական աշխատանքը, — խաղաղ ժամանակակաւ արդյունաբերութեան զործունեւութեանը պատերազմական ժամանակի պահանջներէ հետ կապելու գործը, նպաստել ավիացիայի և քիմիայի զարգացմանը, աշխատախորհրի յայն մասսաներին ներդրաւելը ռազմական գործի ուսումնասիրութեան մէջ, ռազմական միտքը զարգացնելը յերկրում: Այս գործը ամբողջ պետութեան, ամբողջ կուսակցութեան, ամբողջ յերկրի գործն է:

Այդ հսկայական խնդիրներէ նշանաւոր մասը կատարում և Պաշլը-Ալիաքիմ բնկերութեանը: Այդ բնկերութեան գործունեւութեանը լիակատար չափով արդարացրել և իր դերը: Պաշլը-Ալիաքիմի շնորհիվ կարմիր ուղային տորմիդի շարքերը լրացվել են տասնյակ սամաւանակներով, ամբաւում և քիմիական արդյունաբերութեանը: Պաշլը-Ալիաքիմը իր աշխատանքը ուղղել և նույնպէս գյուղատնտեսութեան մէջ քիմիական միջոցներ մտցնելու վրա՝ պարարտացման միջոցով, վնասաւուններէ դեմ պայքարի միջոցով: Պաշլը-Ալիաքիմը նպաստել և քաղաքացիական ավիացիայի զարգանալուն, ինքնաթիռա-մոտորակառուցմանը: Պաշլը-Ալիաքիմի գործունեւութեան շնորհիվ յերկրում կազմակերպված են հարյուրավոր հրաձգային բնկերութեաններ, ռազմական անկյուններ գլուղերում և քաղաքներում:

Կարմիր բանակային-փոփոխիկի խնդիրն է, բացի համաքննրի ուսուցումից, Պաշլը-Ալիաքիմի անդամ լինել, կազմակերպել բջիջներ գլուղում, ունել այդ բնկերութեան գործունեւութեանը, վորով և կամրացնի յերկրի մարտական հզորութեանը:

Արույց 27-րդ. Ինչումն և մեր ուժը («Յերկաւյա ծրագիր» էջ 309—312):

ԱՐՈՒՅՑ 28-րդ

ՄԻՋՀԱՎ ԱՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Արույցի նպատակը

Պարզաբանել կարմիր բանակայիններին, վոր Միութեան պաշտպանունակութեան ամբացումը կապված է առաւելն հերթին յերկ-

րային զորամասերի մարտունակության բարձրացման հետ, քանի վոր այդ զորամասերը կարմիր բանակի զինված ուժերի հիմնական տեսակն են. վոր յերկրային զորամասերի մարտունակության բարձրացումը կապված է վոչ միայն հավաքների ընթացքում ուսուցման գերազանց կազմակերպման հետ, այլ և նրա հետ, թե ինչ չափով են փոփոխվելները ներդրաված միջհավաքային աշխատանքին. վոր, հետևապես, գիտակից կարմիր բանակային-փոփոխվելի խնդիրն է՝ ակտիվ մասնակցություն ցույց տալ միջհավաքային աշխատանքին:

ԶՐՈՒՅՑԻ ՊԼԱՆԸ

1. Յերկրային զորամասերի մարտունակության ամրացման նշանակությունը Միության պաշտպանության բարձրացման համար:

2. Միջհավաքային աշխատանքի խնդիրներն ու նշանակությունը յերկրային զորամասերի մարտական կորովի բարձրացման համար:

3. Միջհավաքային աշխատանքի ձևերը:

4. Փոփոխիկ-կարմիր բանակայինի խնդիրները միջհավաքային ռազմական աշխատանքին ակտիվ մասնակցություն ցույց տալու գործում:

Յերկիրը պաշտպանության պատրաստելու աշխատանքում, բացի Կարմիր բանակի տեխնիկական կորովի ամրացման խնդիրներից, բնակչության ռազմականացումից, առաջնահերթ խնդիր է հանդիսանում Կարմիր բանակի շարքերի ամրացումը:

Կարմիր բանակի շինարարության ու մարտական կորովի բարձրացման գործում հիմնական նշանակություն են ստանում յերկրային զորամասերը, վորպես մեր զինված ուժերի հիմքը: Կարմիր բանակայինների ուսուցման ու զաստիարակության հիմնական շրջաններն են հանդիսանում հավաքները: Կարմիր բանակայինների հավաքները պետք է ոգտադործվեն առավելագույն ոգուտով մարտական պատրաստականության համար, սակայն հավաքների կարճ ժամկետները չեն կարող ամբողջովին ու լիովին ապահովել մշտական մարտական պատրաստությունը: Հավաքներում տարվող ուսուցման ամրացման, միջադպային դրության ու ռազմական վտանգի բացատրության, փոփոխիկի ու զորամասի միջև հավաքից հավաք մշտական սերտ կապ ստեղծելու համար՝ դուրս գալու ու քաղաքում կազմակերպվում է ռազմական ու ռազմաքաղաքական աշխատանք:

վորն և միջնախառնի աշխատանքի էյությունը . ա) անցկացնել միտրյա ստուգողական հալաքներ, բ) կարմիր բանակայիններէ կողմից կատարել հրամանատարներէ հանձնարարությունները, գ) ծավալել մասսայական և խմբակային ուղղական աշխատանք խրճիթ— ընթերցարաններին, ակումբներին, կարմիր անկյուններին կից, դ) անցկացնել վաշտային ժողովներ ու գումարտակային և դնդային կոնֆերանսներ:

Միտրյա հալաքներն ու անհատական հանձնարարությունները հանդիսանում են աշխատանքի պարտադիր ձևեր, և յուրաքանչյուր փոփոխիկ—կարմիր բանակային զրանցից խուսափելու համար յենթարկվում և պատասխանատւության:

Ռազմական աշխատանքը խրճիթ—ընթերցարաններում, կարմիր անկյուններում, ակումբներում կազմակերպվում և հասարակական, ինքնապարժոն սկզբունքներով փոփոխական կազմի կարմիր բանակայիններէ, նախակոչիկներէ և աշխատավոր բնակչության ուժերով: Խրճիթ—ընթերցարանում, կարմիր անկյունում, ակումբում ուղղական աշխատանք ծավալող, հասարակական աշխատանք ծավալող, հասարակական կազմակերպությունը հանդիսանում և Պաշը—Ավիաքիմի բլիշը: Յուրաքանչյուր փոփոխիկ պետք և լինի Պաշը—Ավիաքիմի անդամ և ամբողջ ուղղական աշխատանքի նախաձեռնողը: Յուրաքանչյուր փոփոխիկ պետք և բոլոր ուժերով ողնի ուղղական անկյան վարիչին ու ուղղական գիտելիքներէ խմբակի ղեկավարին, ներգրավելով իր ընկերներին ուղղական աշխատանքի ակտիվ մասնակցությանը:

Հիմնական խնդիրն է՝ դարգացնել մասսայական ուղղական աշխատանք: Կարմիր անկյուններում, խրճիթ— ընթերցարաններում և ակումբներում կազմակերպվում են հրաձգություններ ու հրաձգային մրցակցություններ, թերթերի ուղղական գրականության և ամսագրերի բարձր ընթերցումներ, զրույցներ, սպորտիվ և ուղղամաքիմիական խաղեր, Կարմիր բանակի, ԽՍՀՄ պաշտպանության յերեկոներ, մարտական հուշերի յերեկոյթներ և այլն: Զինթղթակիցներէ ուժերով կազմակերպվում և տեղական պատի լրագրում ուղղական բաժին: Յուրաքանչյուր փոփոխիկ պետք և բաժանորդագրվի «На Страже» թերթին, իսկ մեզանում «Կարմիր Զինփոր»-ին:

Խրճիթ—ընթերցարանին և ակմբին կից կազմակերպվում և ուղղական անկյուն և ըստ հնարամորին ուղղական գիտելիքներէ խմբակ:

Յուրաքանչյուր փոփոխիկ պետք և լինի ուղղական գիտելիք—

ների ակտիւ անդամը, վորպեսզի իր ընկերները հետ միասին կոլ-
լեկտիւ կերպով մշակի հրամատարների տված անհատական
հանձնարարութիւնները և լրացնի իր ռազմական գիտելիքները :

Աշխատանքների ամփոփումները կատարելու, հետագա միջ-
հալաքային աշխատանքը նշելու և գեկուցումներ լսելու համար
միջնորդային ու ներքին դրութեան մասին, կարմիր բանակի և ի-
րենց զորամասի դրութեան ու խնդիրների մասին, դումարովում են
վաշտային ժողովներ ու դումարտակային կոնֆերանսներ, վորոնք
տեղի յեն ունենում վաշտային կամ դումարտակային կենտրոնում :
Յուրաքանչյուր փոփոխիկ պետք և հաճախ վաշտային ժողովնե-
րը : Գումարտակային ու դնդային կոնֆերանսների համար ընտրե-
լովում են պատգամավորներ :

Գիտակից փոփոխիկ-կարմիր բանակայինը հալաքների միջո-
ցին առավելագույն չափով նվիրելով ուսուցման, վաշտի լենին-
յան վրանի խմբակներում՝ պատրաստովում և միջհալաքային ակ-
տիւ աշխատանքի, բաժանորդադրովում և ռազմական թերթին,
ձեռք և բերում ռազմական գրքեր :

Ծանոթութիւն.— Զորամասում աշխատանքի գործնա-
կան ձևերն անցնելը պետք և առավելագույն չափով կապվի
տվյալ զորամասի համալրման շրջանում տարվող միջհալա-
քային աշխատանքի կոնկրետ պարադայի և այն հանձնարա-
րութիւնների հետ, վոր առաջադրում և զորամասը առա-
ջիկա միջհալաքային շրջանի համար :

ՊՈՒՌ— Ազիտպրուգածնի պետի ժամանակ .

պաշտոն . ՌՈՂԻՈՆՈՎ

Ավագ հրահանգիչ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003284

A II
23746

[174.]